

Գ Ա Յ Ա Ն Ե Մ Ա Ր Դ Յ Ա Ն

«ՍԱՍՈՒՆՅԻ ԴԱՎԻԹ»

ԷՊՈՍԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐ

ԵՐԵՎԱՆ

2015

Տպագրվում է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի խորհրդի երաշխավորությամբ:

Գրախոս՝ բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Լիլիթ Հովսեփյան

Գրքույկում ներկայացված են «Սասունցի Դավիթ» էպոսի ուսուցման մի շարք կարևոր խնդիրներ, որոնք մշտապես արդիական են լինելու հայ դպրոցի ուսուցչի և աշակերտի համար:

Գրքույկն օգտակար է ավագ դպրոցի հայ գրականության ուսուցիչների և մանկավարժական բուհի բանասիրական ֆակուլտետի մագիստրոսների համար:

ՆԱԽԱԲԱՆ

Երկար տարիներ հայ գրականություն և հայոց լեզու են դասավանդել Երևանի Ն.Գոգոլի անվան դպրոցի բարձր դասարաններում: Ծանոթ եմ հայ գրականության և հայ ժողովրդական բանահյուսության ծրագրային այն երկերի ուսուցման մեթոդներին, որոնք դպրոցում տարիների ընթացքում դասավանդել եմ սիրով ու նվիրումով:

Այդ կարևոր թեմաներից է «Սասունցի Դավիթ» հայ հերոսական էպոսը, որի ուսուցումը և յուրացումը եղել ու մնում է հայ դպրոցի գրականության ուսուցչի հիմնական խնդիրներից մեկը:

«Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք բնագրի յուրացումը պարտադիր է ոչ միայն ավագ դպրոցի աշակերտների, այլև մանկավարժական համալսարանի և ինստիտուտների բոլոր ֆակուլտետների ուսանողության համար, որովհետև դրանք բոլորը պատրաստում են ապագա ուսուցչին, որն իր ազգային մտածողությամբ ու համամարդկային ընկալումներով առաջադեմ լինելու պարտավորվածությունն ունի:

«Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք բնագիրը թարգմանված է աշխարհի շատ լեզուներով և ունի միջազգային տարածում: Մեր ազգային էպոսի գաղափարախոսությունը երբեք հնացող չէ, որովհետև այն մարդուց պահանջում է սիրել հայրենիքը, լինել աշխատասեր ու մարդասեր, պահպանել հայ ընտանիքի ավանդույթները, չենթարկվել

բռնակալ ուժին, ունենալ անկախ հայրենիք և ամենակարևորը՝ խաղաղ գոյակցել աշխարհի այլ ժողովուրդների հետ:

«Սասունցի Դավիթ» էպոսի ուսուցման մի քանի խնդիրներ» ուսումնամեթոդական հետազոտությունը ներկայացնում է այն գիտելիքների ծավալը, որը պարտադիր է յուրաքանչյուր ուսուցչի համար:

Գրքույկի վերջում («Հավելված») տրվում են ժամանակակից դպրոցին հատուկ ինովացիոն դասանմուշների ու առաջադրանքների օրինակներ:

Գ. Մարդյան

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅ ԷՊՈՍՏՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԴՐՎԱԳՆԵՐ

«Սասունցի Դավիթ» կամ «Սասնա ծռեր» էպոսը հայտնաբերողը եղել է հայ բանագիտության մեծ երախտավորը՝ Գարեգին Սրվանձտյանցը¹։ Այս երևույթի հայտնագործումը խիստ բնորոշ է մտավոր մի գործչի համար, որի ողջ ստեղծագործությունը նպատակ ուներ ամեն հայի, հատկապես նոր բարձրացող սերնդի գիտակցության մեջ ամրապնդել ազգային ինքնագիտակցություն ու հայրենասիրություն։ Իր սրբազան նպատակը նա շարադրել է «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» գրքույկի ծրագրողի խոսքի մեջ։ «Գրոց ու բրոց» ուշագրավ խորագիրն ազդարարում է հեղինակի թարմաշունչ ու նոր դիմումի արտաստվոր բնույթը։ Իր հիանալի գրքույկը Գ. Սրվանձտյանցը համարում է յուրօրինակ նվեր ողջ հայ ժողովրդին. նրանում հավաքված նյութերը ներկայացնում են հայի ոգին, հողը, ջուրը, այն ամենը, ինչը հային պահում է հայ։ Չէ՞ որ դարեր ի վեր բռնակալները հազար ու մի խորամանկությամբ փորձել են արմատախիլ անել հայ ազգին, ջնջել նրան աշխարհի երեսից. «Անկարելի է գտնել աշխարհ մը և ազգ մը, որ համեմատվի հայուն և յուր երկրին, որ այնքան ավեր, մահ, սուր, ուրացություն, արյուն, գերություն կրած լինի, ու նորեն ցայսօր ապրի»²։

Որքա՛ն մարգարեական են հնչում իսկական հայրենասերի տազնապները։ Նա զգում էր ցեղասպանության՝ դամոկլյան սրի կախված լինելը հայ ժողովրդի արևմտահայ հատվածի գլխին և իր անմնացորդ բանահավաքչական ու բանագիտական եռանդով փրկում էր բանահյուսական գանձերը՝ ի պահ տալով ապագա սերունդներին։ Եվ դրանց մեջ էր հայ բանահյուսության մեծագույն գանձը՝ «Սասունցի Դավիթ» էպոսը։

Էպոսի բնագիրը տպագրելու հանգամանքները հայտնի են դառնում հենց բանահավաքի գրածից։ Իմանում ենք, որ բանագետը երեք տարի հետամուտ է եղել հայ հերոսական էպոսի բանավոր շարադրանքը գտնելուն, և վերջապես նրա ջանքերը պսակվել են հաջողությամբ. Մշո դաշտի Առնիստ գյուղի երեսփոխան Կրպոն արժանավոր Օհան վարդապետի միջոցով ներկայացրել է բանագետին։ Երեք օր նա խնամել է Կրպոյին, պատվել, պարգևատրել և վերջապես գրառել է նրա պատմածը։

¹ Գարեգին Սրվանձտյանց անուն-ազգանունը բանագետը ստացել է 1857թ., երբ սովորում էր Խրիմյան հայրիկի հիմնած Վարագա վանքի ժառանգավորաց վարժարանում. «Այստեղ նա առաջին անգամ կարդում է Եղիշեի «Վարդանանց պատմությունը», խանդավառվում Վարդանանց քաջերի հերոսական սխրանքներով։ Այստեղ էլ նա փոխում է իր մկրտության անուն-ազգանունը և Վարդան Մամիկոնյանի անվեհեր զինվորներից մեկի՝ Գարեգին Սրվանձտյանցի անուն-ազգանունով, իրեն կոչում Գարեգին Սրվանձտյանց» (Տե՛ս Գ.Սրվանձտյանց, Երկեր, հ.1, Երևան, 1978, էջ 8)։

² Նույն տեղում, էջ 29։

Ասացողը խոստովանել է, որ իր իմացածը թերի է, և վարպետն առավել երկար էր պատմում, իսկ էպոսի որոշ հատվածներ ասվում էին երգով:

Գ. Սրվանձտյանցն իր նախաբանով ճշգրտորեն ու հիմնովին սկզբնավորում է հայ էպոսագիտությունը, որն ունեցավ մեծ ապագա, միջազգային ճանաչում, և նրա կատարածը այսօր էլ շարունակում են նոր էպոսագետներ:

Բանահավաքն ունի նաև այսպիսի խոստովանություն. «Այս գործիս հրատարակությունը հասկացողին համար արժեք կ'ունենա, բայց կարծես արհամարհողներ ավելի պիտի լինին և այպանողներ, ոչ միայն այս գրածին կտորը, այլ ամբողջ սույն գրքույկը, ընդ որ և իմ անձը: Ասոնք հասկացողներն են: Բայց մեր փուլը չէ: Քաջալերված կը համարիմ զիս, եթե համրանքով քսան հոգի նեթ լինին հավանող այս գործուն, և կը շարունակիմ, խրախույս տալով այլոց որ՝ հետևին, աշխատասիրեն ձեռք բերել, ի լույս ածել այսպիսի գրվածքներ»³:

Բանագետն իրավացիորեն նշում է, որ «Սասունցի Դավիթ» էպոսի առաջին ճյուղն իր արմատներով ձգվում է դեպի նախաքրիստոնեական ժամանակները և արձագանքն է Աստվածաշնչի Հին կտակարանում զետեղված այն փաստի, թե Ասորեստանի Սենեքերիմ թագավորի որդիները՝ Ադրամելեքն ու Սանասարը, սրով սպանում են իրեց հորը և փախչում Արարատի երկիրը:⁴ Գ. Սրվանձտյանցը վկայում է, որ Աստվածաշնչի այդ դեպքը նույնությամբ պատմում են և՛ Մովսես Խորենացին, և՛ Թովմա Արծրունին:

Մովսես Խորենացի

«Մենք կարծես մոռացության տվինք Սենեքերիմի մասին (խոսել): Որովհետև Նաբուգոդոնոսորի թագավորությունից ութսուն, քիչ ավելի կամ պակաս տարի առաջ՝ այս Սենեքերիմը Ասորեստանի թագավոր է եղել, նա, որ Երուսաղեմը պաշարեց հրեաների Եզեկիա առաջնորդի ժամանակ: Նրա որդիները՝ Ադրամելեք ու Սանասար, նրան սպանելով, փախան եկան մեզ մոտ»⁵:

Թովմա Արծրունի

1. «Այնուհետև Սենեքերիմի որդիները՝ Ադրամելեքն ու Սանասարը, սպանեցին իրենց հորը և ուժեղ զորագնդով եկան Սիմ լեռը, որն իր անունն ստացել էր իրենց նախահայր Սեմի անունից»⁶:

2. «Սենեքերիմի երկու որդիները՝ Ադրամելեքն ու Սանասարը, Ասորդանիսին թագավորեցնելու պատճառով նախանձեցին, չարացան և սրով սպանեցին իրենց հորը,

³ Նույն տեղում, էջ 86:

⁴ Դ, Թագավորաց, 19, 36: Տե՛ս նաև Բ, Մնացորդաց, 32, 21:

⁵ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Աշխարհաբար թարգմանությունը և մեկնաբանությունները Ստ. Մալխասյանցի, Երևան, 1981, էջ 83:

⁶ Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Երևան, 1978, էջ 32:

որը թագավորեց 18 տարի: Իսկ իրենք, ինչպես ասվում է, գնացին հյուսիս-արևելք և ավելի վերև»⁷:

Գ. Սրվանձտյանցը հստակեցնում է էպոսում հիշատակված աշխարհագրական անունների տեղագրությունը, ներկայացնում հեթանոսական ու քրիստոնեական հավատալիքների միախառնումը: Նա արդեն կոտակում է, որ հայ ժողովրդական հերոսական էպոսի գլխավոր դեմքը Սասունցի Դավիթն է, որն անսահման ուժի տեր է, և ըստ էպոսի՝ նրա նետած գուրգը դեռ շարունակում է թռչել տիեզերքում: Էպոսի դյուցազունների համար կարևոր է քրիստոնեական երդումը՝ «Հացն ու գինին, տերն կենդանի»: Հացը Հիսուս Քրիստոսի մարմինն է, իսկ գինին՝ նրա արյունը.⁸ էպոսում կա նաև հավատը, թե Հիսուսը հավերժ կենդանի է:

Գ. Սրվանձտյանցը նկարագրում է Դավթի անվեհերությունն ու վեհանձնությունը Մսրա Մելիքի դեմ կռվելիս, նաև Խանդութի քաջությունը և նվիրվածությունն իր սիրեցյալի հանդեպ: Միաժամանակ շեշտում է Դավթի մտերմությունը հասարակ գեղջուկների հետ:

Սրվանձտյանցն անձամբ տեսել է Մհերի դուռը, որն «ամենալերջ քար է, գոր տաշեր և կոկեր են մեծ դռան ձևով և վրան բևեռագիրեր գրած են, խիստ հստակ»⁹:

Փոքր Մհերին համեմատում է հեթանոսական աստծու հետ և թեականորեն բաղդատում Միթրայի և արեգակի պաշտամունքի հետ:

Գ. Սրվանձտյանցին հետաքրքրում են Սասունցի Դավթի՝ ազգային սիրված հերոսի բնավորության հիմնական գծերը՝ քաջություն, հայրենասիրություն, նվիրում իր ժողովրդին, հոգատարություն դեպի աշխատավոր մարդը, վեհանձնություն և մեծահոգություն:

Ժողովրդական էպոսներն ամեն մի ազգի հայրենասիրական խոր զգացման հավաքական դրսևորումն են: Այդ վկայում են տարբեր ժողովուրդների էպոսներին տրված նշանավոր մտավորականների գնահատականները:

Ռուս հին գրականության նշանավոր գիտակ Դ.Լիխաչովը «Ասք Իգորի գնդի արշավանքի մասին» պատմական և բանահյուսական ծագում ունեցող երկի մասին գրում է. «Մերը հայրենիքի և ռուսական հողի նկատմամբ համակում է «Ասքի» ընթերցողին»¹⁰ : Դերենիկ Դեմիրճյանն էլ «Ասքի» հայերեն թարգմանության առաջաբանում հիշեցնում է, թե «Հայ ընթերցողի համար հարազատ են «Ասքի» հնչյունները: Հայ ժողովուրդը մի անգամ չէ միայն, որ կանգնած է եղել արևելքի

⁷ Նույն տեղում, էջ 59:

⁸ Մատթեոս, ԻԶ, 27-29:

⁹ Գ. Սրվանձտյանց, Երկեր, հ.1, էջ 87:

¹⁰ «Слово о полку Игореве», Москва, 1987, с. 20. («Сила любви к родине, к Русской земле, покоряет читателей «Слова»).

հեղեղների առջև և ոչ սակավ երգել է իր անհավասար կոնիվը պատմության բերած արհավիրքների դեմ»¹¹:

Սրվանձտյանցի գրառումից հետո սկսվել են էպոսի նոր պատումների որոնումներ ու գրառումներ: Դրանց մեջ հատկանշական է Մանուկ Աբեղյանի գրառած տարբերակը: Աբեղյանը, բնականաբար, բարձր է գնահատում Գարեգին Սրվանձտյանցի կատարածը և նախքան իր գրառած տարբերակը ներկայացնելը խոսում է հայ ժողովրդական նոր վեպի «մեծ ընդարձակության» մասին և նույնիսկ ակնարկում է վերջինիս ոչ թե երեք կամ չորս, այլ քառասուն ճյուղ ունենալու մասին: Նրա կարծիքով, իր գրառած պատումը ոչ միայն լրացնում է Գ. Սրվանձտյանցի տարբերակը, այլև բոլորովին նոր գեղարվեստական արժանավորություն է արձանագրում: Դավթի ճյուղում բնագետը տեսնում է հայ հնագույն դյուցազներգությունների կնիքը, միևնույն ժամանակ նաև միջին դարերի հայոց պատմական կյանքը, որում շեշտված են ընտանեկան հարաբերությունների պատկերները:

Մանուկ Աբեղյանը, հավատարիմ մնալով «Մասունցի Դավիթ» էպոսի ժողովրդական տաղաչափությանը, այն տողատում է, սակայն, նրա կարծիքով, իր տողատած չափածո բնագիրը երբեմն ունի թույլ հատվածներ, որը պայմանավորված է ասացողի՝ վեպի որոշ հատվածներ մոռացած լինելու փաստով: Ահա Աբեղյանի տողատած վեպից մի հատված, որը պատմում է, թե ինչու է Դավիթը կոչվում Թլոր.

Մեկ սենի կրակ, մեկ սենի ոսկի,
Բերին, դրին հեռջեվ Դավթին:
Դավիթ ձեռ էտու, տը տաներ տախ ոսկին,
Ասծու հրամանքիվ՝ հրեշտակ ձեռ կանեց, էտու կրակին:
Էնու մատ էրիցավ, կրակ կպավ մատին.
Էտու լեզվին՝ լեզուն էլ էրիցավ.
Որ լեզուն էրիցավ՝ լալ էլավ քիչ,-
Անուն դրին Թլոր Դավիթ:¹²

Այս նույն հատվածը համահավաք բնագրում ունի հետևյալ պատկերը.

Բերին, ԳԴավիթ դրին սեղանի մոտ.
Ոսկին մի կողք լցրին, կրակ մի կողք:
Դրին Դավթի առջև, ասին.
-Դավիթ, ա՛ռ, ա՛ռ, ա՛ռ, ո՛ր մեկ կուզես:

¹¹ «Ասք Իգորի արշավանքի մասին», Երևան, 1985, էջ 5:

¹² «Մասնա ծոբ», Ժողովրդական վեպ, Աշխատությամբ Ս.Հարությունյանի, Երևան, 1974, էջ 315: Տեղին ենք համարում տալ որոշ բարբառային բառերի թարգմանությունը ըստ բնագիրը պարունակող հատորի բացատրական բառարանի: Սենի-սինի, սկուտեղ: Տախ-դեպի, կողմ, դեհ: Լալ-համր: Թլոր-թլվատ, կակազ:

Դավիթ իր ձեռ պարզեց ոսկուն,
Հրեշտակ ձեռնեն բռնեց, տարավ դեհ կրակ:
Իր մատ որ կրակին կըպավ, կրակ կպավ մատին.
Մատ էրելով՝ տարավ բերան, լեզու՛ն էլ երեց:
Տղան վրժժա՛ց, էլաց:
Կրակ բերնեն դո՛ւրս հանեցին:
...Հալա լեզուն էլ երեց, էլավ թլոր:¹³

Այս երկու տարբերակներին հետևում են նորանոր գրառումներ՝ Սարգիս Հայկունու, Երվանդ Լալայանի, Արտ.Աբեղյանի, Ստ.Կանայանցի և ուրիշների:

Խորհրդային տարիներին Կարապետ Մելիք-Օհանջանյանի գլխավորությամբ Հայաստանի տարբեր շրջաններում ապրող գաղթականներից գրառվում են նոր տարբերակներ: Դրա արդյունքում 1936, 1944, 1951թթ. հրատարակվում են «Սասնա ծռեր» էպոսի երեք հատորները: Իսկ 1977-ին Սարգիս Հարությունյանը հրատարակում է «Սասնա ծռեր» էպոսի 10 լավագույն պատումները՝ գիտական վերջաբանով ու բառարանով, անվանացանկով և ծանոթագրություններով:

Այժմ հայտնի են «Սասնա ծռեր» էպոսի շուրջ 150 պատումներ: Դրանց զգալի մասը տպագրված է: Մակայն դպրոցում և բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսուցանվում է «Մասունցի Դավիթ» էպոսի համահավաք բնագիրը, որը լույս տեսավ 1939 թվականին՝ ակադեմիկոս Հովսեփ Օրբելու մեծարժեք նախաբանով և առավել բարձրարժեք ծանոթագրություններով: Ահա թե ինչ է գրում Ֆ.Ֆեյդին «Մասունցի Դավիթ» էպոսի համահավաք բնագրի վերաբերյալ. «Կարդալով այս ծավալուն ու հոյակապորեն ստեղծված էպոսը՝ կարելի է մտածել, թե այն գերազանց գիտնականների վերաձուլված մի ծաղկաքաղ է: Նման բան չկա: Հանձնախմբի անդամները վերաշինել են բնագիրը բանասիրական մանրակրկիտությամբ և գիտական ընդունված խստությամբ: *Նրանք չեն ավելացրել անգամ մի տող՝ ծայրը ծայրին բերելու համար: Ողջ բնագիրը ժողովրդական մայր երակից է*»¹⁴:

Ակադեմիկոս Հովսեփ Օրբելին էպոսին կցված իր նախաբանում նշում է, թե ովքեր էին այն հմուտ բանագետները, որոնք կազմեցին 1939թ. տպագրված բնագիրը: Նրանք են Մանուկ Աբեղյանը, Գևորգ Աբովը և Արամ Ղանալանյանը:

Էպոսի համահավաք բնագրի վերջում դրված են բարբառային բառերի բացատրական բառարան և էպոսում նշված վայրերի անունները:

¹³ «Մասունցի Դավիթ», Հայկական ժողովրդական էպոս, Երևան, 1961, էջ 148:

¹⁴ Ա.Դոլուխանյան, Ֆրեդերիկ Ֆեյդին հայագետ, Երևան, 2008, էջ 185:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

«ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ԷՊՈՍԻ ԳԱՂԱՓԱՐՆԵՐՆ ՈՒ ԿԵՐՊԱՐՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

«Սասունցի Դավիթ» էպոսի բացառիկ արժեքներից մեկը նրանում արտահայտված գաղափարներն են: Բնականաբար, առաջատար գաղափարը հայրենասիրությունն է, որի մարմնավորողը հայ կինն է՝ Ծովինարը: Բաղդադի խալիֆի հարկահանները գալիս են՝ տանելու հարկը հայոց Գագիկ թագավորից: Ծովինարի գեղեցկությունը տեսնելով («Աղջիկ էնպես խորոտ, էնպես խորոտ»)՝ որոշում են խալիֆին համոզել հարկի փոխարեն կնության առնել Ծովինարին: Խալիֆը պահանջում է Ծովինարին՝ զգուշացնելով, որ մերժման դեպքում կավերի Հայաստանը: Հարցի լուծումը գտնում է հայրենասեր Ծովինարը՝ կամովին իրեն զոհելով հանուն երկրի ու ազգականների:

Ծովինար խանում ասաց.

-Որ ես էն կռապաշտ թագավոր չառնեմ,

Զամեն տի սպանի իմ պատճառով,

Աղեկն էն է, ե՛ս էրթամ,

Ուրիշ մարդու թող բան չըլնի:

Ե՛ս մենակ մեռնիմ իմ հոր թերեն.

Ես մեկ ջան եմ, էրթամ, կորսվիմ,

Քանց մեր Հայաստան երկիր ավերի,

Էն հազար-հազար հոգիք կորուսանին:

Դարձավ ասաց. -Հայրի՛կ, ինձ տուր էնոր:¹

Էպոսի դյուցազունները խալիֆի զավակները չեն, նրանք ջրածին են, ավելին՝ ջուրը Հայաստանինն է: Սա շատ կարևոր դրվագ է: Ընդհանրապես հայրենիքը, հայրենի եզերքը խորհրդանշում են հողը, ջուրը, մարդու հարազատները:

Ծովինարը հայ միջնադարյան գրականության մեջ ունի նախաստիպ՝ Տիգրանուհին՝ Տիգրան Երվանդյանի քույրը, որն իմանալով ամուսնու՝ Մարաց Աժդահակի նենգ նպատակները, ծածուկ սուրհանդակ է ուղարկում Տիգրանի մոտ և կանխում եղբոր դեմ նյութված դավադրությունը. «Իսկ խորագետ գեղեցկուհին, այս դավաճանությունը հասկանալով՝ սիրալիր խոսքերով պատասխանում է Աժդահակին և մտերիմների միջոցով շտապով եղբորը հայտնում է (Աժդահակի) նենգությունը»:²

Էպոսում ազգանվեր ու հայրենասիրական գործեր կատարում են թե՛ Սանասարն ու Բաղդասարը, թե՛ Մեծ Մհերը, թե՛ Սասունցի Դավիթը, թե՛ Փոքր Մհերը: Նրանց

¹ «Սասունցի Դավիթ», էջ 6: Այսուհետ էպոսից բերված մեջբերումների էջերը կնշվեն վերևում - Գ.Մ.:

² Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, էջ 95:

հայրենասիրության դրսևորումները կներկայացնենք առանձին դասի ձևով՝ իրենց տեղում:

Էպոսի գլխավոր նպատակներից մեկն էլ մարդասիրության դաստիարակումն է: Առաջին ճյուղում արդեն Սասունում հաստատված Սանասարն ու Բաղդասարը սկսում են կառուցել իրենց բերդը: Բայց սկզբում կացարաններ են պատրաստում աշխատավոր մարդկանց համար: Այդ քայլի նպատակը մարդասիրական է.

Բաղդասար պատասխանեց.

-Առաջ շինենք զեղոնց տներ,

Ու նոր շինենք զմեր բերդ.

Էդ խեղճ մարդեր չեն կարնա

Արևուն առջև կենա:

Ու սկսեցին զտներ (էջ 34):

Էպոսում կա աշխատավոր մարդու նկատմամբ հատուկ պաշտամունք, և Սանա դյուցազուններն ապրում են այդ գիտակցությամբ. «Նրանց բնավորության ժողովրդական բնույթը սրանով չի ավարտվում: Նրանք պարզությամբ տիրապետում են ամենահամեստ արհեստների, բարեկամանում են խեղճերի հետ, կամովին ձեռք են մեկնում հոգնած գեղջուկներին, նույնիսկ, եթե նրանք ճանապարհին հանդիպած օտարականներ են: Նրանց համեստությունն այնքան մեծ է, որ ինչպես Օրբելին է նկատել Երևանի հրատարակության առաջաբանում. «Այս չորս հերոսների անունները ժողովրդի հիշողության մեջ չեն աղարտվել ու խճողվել ոչ մի տիտղոսով կամ պատվավոր կոչումով»³, - գրում է Ֆ. Ֆեյդին:

Էպոսում փառաբանվում է այն անհատը, որը հանուն հայրենիքի պատրաստ էր զոհել իր կյանքը, և ի հավելումն այդ գաղափարի՝ սրբազան է համարվում որևէ ժողովրդի՝ հանուն իր ազգային ազատության ու անկախության նվաճողների դեմ ուղղված պատերազմը:

Դավիթը վերաշինում է Մեծ Մհերի կառուցած Մարութա վանքը: Սակայն ամեն առավոտ վանքը վերակառուցող վարպետներն իրենց կառուցածը գտնում են քանդված: Ոչ ոք չէր կարողանում բացատրել դրա պատճառը, մինչև որ Սասունցի Դավիթը երազ է տեսնում, և երազում Աստծո հրեշտակը նրան հրահանգում է եկեղեցու պատի մեջ դնել Դավթի սուրը: Սա խիստ խորհրդանշական դրվագ է: Դեռևս չորրորդ դարից՝ Շապուհ Երկարակյացի օրերից մինչև քսաներորդ դարասկզբի Մեծ եղեռնը, որը երիտթուրքերի ջանքերով նահատակեց մեկ ու կես միլիոն հայերի, հայ ժողովուրդն իր ազգային ինքնության, կրոնական դավանանքի, անկախության համար մղել է ազատագրական կռիվներ: Ահա էպոսի համապատասխան դրվագը.

³ Ա.Դուրվխանյան, Ֆ.Ֆեյդին հայագետ, էջ183:

Էն գիշեր կը քնեն, Դավիթ կը տեսնա՝
Մարութա բարձր Աստվածածին կը գա էրագ, կ'ասի.
«Քո՛ թուր քո մեջքեն քաշի,
«Իմ հիմ քո թրի վերա ձգի,
«Օրե՛ մի կը շինես, կը թամամցես,
«Պատարագ մեջ վանքիս կը մատուցես,
«Որ ես վեր իմ հիման կանգնեմ»:
Ուստեք տիլ կը զարկեն էդ քարերու բոլոր:
Դավիթ զարթնավ, տեսավ՝
Մարութա բարձր Աստվածածին չըկա:
Քարն իր տեղն է գնացե,
Հողն իր տեղն է գնացե,
Ավագ, կավ ու ինչ որ պատրաստություն կար՝
Ամենն իր տեղն է գնացե (էջ 195):

Այս խորհրդանշական իմաստին, անշուշտ, ծանոթ էր աշխարհահռչակ կինոբեմադրիչ Սերգեյ Փարաջանովը, որը 1984 թվականին նկարած «Սուրամի ամրոցի լեգենդը» կինոնկարում ամրոցը կանգուն պահելու համար պատի մեջ շարել է տալիս մի պատանու, որի կյանքի գնով հաստատվում է ամրոցի ամրությունը:

Էպոսի տարբեր էջերում տեսնում ենք քրիստոնեական պաշտամունքի դրսևորումներ: Դրանց առաջին ապացույցներից մեկն այն է, որ Ծովինարը ձևական է ամուսնանում Բաղդադի խալիֆի հետ, որը մահմեդական էր (էպոսում՝ կռապաշտ), և քրիստոնեական կրոնը նման ամուսնություն չի թույլատրում: Ծովինարն իր հետ օտար երկիր է տանում նաև քահանա՝ շեշտելով ցմահ քրիստոնյա մնալու ձգտումը: Ավելին, Ծովինարի խնդրանքով քահանան Բաղդադում Սանասարին ու Բաղդասարին հայերեն գրել-կարդալ է սովորեցնում.

Սանասար ու Բաղդասար պետ կտրիճներ դարձան.
Մերն ասաց քահանային. - Տե՛րտեր,
Իմ տղաներին դաս տուր՝ կարդան:
Դաս էտու տղաներին.
Էնոնք գրել - կարդալ սովորեցին (էջ 13):

Արևմտահայաստանի նշանավոր վանքերից Սուրբ Կարապետը⁴ կարևոր դեր ունի էպոսում: Ծովինարի երագում հենց այդ վանքն է զգուշացնում, թե իր որդիներին խալիֆը մատաղ է խոստացել: Վանքը փրկում է ապագա դյուցազունների կյանքը.

⁴ Մշո Ս.Կարապետ վանք - կոչվել է նաև Մշո Սուլթան Ս.Կարապետ, Գլակա վանք, Իննակնյան վանք: Գտնվում է Մուշ քաղաքից հյուսիս - արևմուտք: Այժմ թուրքերի ձեռքով լրիվ ավերված: Չորրորդ դարի սկզբին հիմնել է Գրիգոր Լուսավորիչը՝ այնտեղ ամփոփելով Հովհաննես Մկրտչի մասունքները

Որդիք, ձեզի մատաղ կ'անի,
Փախեք, գնացեք Հայոց թագավորի քաղաք (էջ 21):

Քրիստոնեական կրոնի ցայտուն դրսևորում է նաև Սասնա դյուցազունների թևի վրայի եղած խաչը, որը, նայած հանգամանքների, գունափոխվում է:

Ինչպես նկատել են էպոսագետները, հայկական էպոսում առկա են հնագույն հավատալիքների հետքեր, հեթանոսական հավատալիքներ: Օրինակ՝ Մեծ Մարա Մելիքը և Մեծ Միերը դաշն են կնքում, ըստ որի, յուրաքանչյուրի մահից հետո մյուսը նրա կնոջն ու երեխաներին պետք է խնամի, և այդ դաշինքը հաստատում են ոչ թե Ավետարանի կամ Ղուրանի վրա երդվելով, այլ իրենց մատների արյունը խառնելով.

Մատներ կտրին, արուն արնի խառնեցին,
Պայման դրին, էղան աղբեր (էջ 117):

Հեթանոսական ժամանակների սովորություններից է նաև այն դրվագը, երբ Իսմիլ խաթունը, բացելով իր կուրծքը, արգելում է Մարա Մելիքին խեղդել դեռևս տղայական հասակում գտնվող Դավթին.

Մելիքի մեր ծծեր էբաց, կայնեց Մելիքի առջև,
Ասաց.- Թե դու Դավիթ ըսպանե՛ս՝
Էս ծծերի կաթ *քո վերան հարա՛մ ըլնի* (150):

Տեսնենք նաև քրիստոնեական հավատալիքների դրսևորումները:

Պատերազմ գնալուց առաջ Դավիթը հորեղբորից՝ Ձենով Հովանից, խնդրում է իր հոր Խաչ Պատերազմին.

Ասաց. - Հրողբե՛ր,
Տու՛ր ինձ Միերի Խաչ Պատերազմին.
Հրողբերն ասաց: - Ես չեմ կարնա տա.
Թե արժա՛ն ես՝ կը գա քո թևին,
Թե արժան չես՝ չի գա քո թևին:
Էդտեղ աստծու հրամանով
Խաչ Պատերազմին իջավ վեր աջ թևին (էջ 227):

(Կարապետ, որի անունով էլ վանքը կոչվել է Ս.Կարապետ (տե՛ս «Քրիստոնյա Հայաստան», Հանրագիտարան, Երևան, 2002, էջ 754):

Քրիստոնեական կրոնի հավատալիքներն ամենից ավելի շեշտված են էպոսի չորրորդ՝ «Փոքր Մհեր» ճյուղում, որի ավարտին հերոսը նորից դիմում է Հիսուս Քրիստոսին՝ ակնկալելով գորեղ աստվածային օգնությունը.

Մհեր գնաց, հասավ Ոստանա կապան.
Որ հասավ Ոստանա կապան,
Էնտեղեն, - մեկ իշխան կար,
Կապ էթալ, զՄհեր կապեց:
Մհեր ձիով ընկավ կապ, ասաց.
«Հիշա իմ հացն ու գինին, տեր կենդանին,
Մարութա բարձր Աստվածածին»:
Ասաց, էգար, կտրեց ըզկապ,
Ազատեց Քուռկիկ Ջալալին (էջ 318):

Քրիստոնեական հավատալիքները երևում են նաև էպոսի «Վերջերգում»՝ կապված քրիստոնեական հավատքի երկու կարևոր տոների՝ Վարդավառի և Համբարձման հետ: Արդի հայկական դպրոցներում անցնում են հայոց եկեղեցու պատմություն, և գրականության ուսուցիչը պարտավոր է օգտագործել այս հարմար առիթը՝ միջառարկայական կապերը ամրացնելու համար: Նա աշակերտներին բացատրում է, թե որոնք են Վարդավառի և Համբարձման տոները:

Վարդավառ

«Հին հեթանոսական ժամանակից մնացած մեծ տոնի անունն է՝ որ վարդերով զարդարելու օրն է, և վառ բառն էլ փայլունի ու զարդարունի իմաստով է գործածված: Թե Վարդավառը Ամանորի տոնի հետ նույն կամ տարբեր տոն է, այստեղ քննության չենք առնի, միայն կնշենք, որ շատ հին հեթանոսական տոների նպատակն ու հիշատակը փոխելով՝ անունը պահվեց հայ քրիստոնեության մեջ...: Այդ կերպով Հին Վարդավառի տոնն էլ Քրիստոսի Այլակերպության կամ Պայծառակերպության տոնի փոխվեց: Հին Վարդավառի հիշատակներն են վարդով զարդարել, աղավնի թոցնել և ջուր սրսկել, որը հիմա էլ Այլակերպության տոնի առթիվ ենք գործածում»⁵:

Համբարձում տեառն

«Քրիստոսը իր հարություն առնելուց հետո քառասուն օր երկրի վրա մնաց (Գործ. Ա.3), հետո իր հարուցյալ ու փառավորյալ մարմնով երկինք համբարձվեց: Այդ խորհրդական տոնը համարվում է Ջատկի քառասուներորդ օրը, հինգշաբթի, որը 35 օրվա շարժունակությամբ ապրիլի 30-ից մինչև հունիսի 3-ը կարող է հանդիպել:

⁵ Մաղաքիա արք. Օրմանյան, Ծիսական բառարան, Երևան, 1992, էջ 40:

Համբարձման տոնը, երևում է, հին ժամանակ մեծ նշանակություն չունեի շաբաթվա մեջ լինելով, որովհետև նախատոնակ անգամ չունեի, բայց միջին դարերում գլխավոր տերունքների ձև էր ստացել: Համբարձումից Հոգեգալուստի տասը օրերը՝ առանց հատկապես Համբարձման տոն լինելու, Հարության շարականների և սաղմոսների հետ Համբարձմանը նվիրված շարականներ և սաղմոսներ էլ ունեն⁶:

Հայ եկեղեցու պատմության քաջ գիտակ Մաղաքիա Օրմանյանն իր բացատրություններում նշում է կրոնի ծիսական կողմի հին ձևերի գործածությունը նոր կրոնի՝ քրիստոնեության մեջ:

Ի վերջո, թե՛ հեթանոսական կրոններում և թե՛ քրիստոնեականում հավատ կա օրհնանքի և անեծքի նկատմամբ: Ժողովրդական առած-ասացվածքներում, որոնք շատ հին ծագում ունեն, նույնիսկ զգուշացվում է. «Հոր անեծքը մոր անեծք չէ. հոր անեծքից վախեցի՛ր»:

«Սասունցի Դավիթ» էպոսում էլ կան այդ հավատալիքները: Երբ Փոքր Մհերն առանց հորը՝ Դավթին, ճանաչելու, կոպում է նրա հետ, Դավիթն անիծում է նրան, որ անմահ ու անժառանգ դառնա.

Դավիթ կանչեց ասաց.
-Մհե՛ր, որ դու հետ ինձի կռիվ արիր,
Ինձի ամանչեցրիր,
Կանչեր եմ քաղցրիկ աստված,
Անմահ ըլնիս, անժառանգ (էջ 290):

Էպոսի բոլոր ճյուղերն էլ սկսում են ողորմիների շարանով՝ ուղղված տվյալ ճյուղի հիմնական գործող անձանց: Հայ ժողովուրդն այնքան արդարադատ ու մեծահոգի է, որ ողորմի է ասում անգամ թշնամուն՝ Իսմիլ խաթունին՝ չուրանալով, որ նա է մեծացրել ու պահպանել մանուկ Դավթին: Ու եթե իր սիրելի անձերին ուղղում է «հազա՛ր օղորմի» օրհնանքը, ապա Իսմիլ խաթունին գոնե մեկ օղորմի է տալիս.

Դառնամ, զօղորմի՛ն տի տամ
Դեղձուն ճուղ-Ծամին,- հազա՛ր օղորմի.
Դառնամ, զօղորմի՛ն տի տամ
Քեռի Թորոսին,- հազա՛ր օղորմի.
Դառնամ, զօղորմի՛ն տի տամ
Ձենով Հովանին,- հազա՛ր օղորմի.
Դառնամ, զօղորմի՛ն տի տամ
Էն Ջոջ Մհերի՛ն, - հազա՛ր օղորմի.
Դառնամ, զօղորմի՛ն տի տամ

⁶ Նույն տեղում, էջ 26:

Արմադանին, - հազար օդորմի.
Դառնամ, զօդորմի՛ն տի տամ
Իսմիլ Խաթունին, - տի տամ օդորմի (էջ 96):

«Սասունցի Դավիթ» էպոսում կա այն ճշմարիտ միտքը, թե նվաճողներն ու բռնակալներն են հրահրում պատերազմներ: Հասարակ մարդիկ այդ պատերազմի հետ կապ չունեն, ավելին, նրանք դեմ են պատերազմին: Սա էպոսի գաղափարական հարստության այն կետն է, որն առկա է միջնադարյան հայ մատենագրության, ինչպես նաև հայ նոր գրականության մեջ: Հիշենք XV դարի բանաստեղծ Մկրտիչ Նաղաշի «Վասն ազահութեան» քերթվածը, Հովհաննես Թումանյանի «Հառաչանք» պոեմը, Ստեփան Զորյանի «Զրհորի մոտ» պատմվածքը: Այս համեմատական գուգահեռները հայ գրականության ուսուցչին օգնում են հին ու նոր նյութերի գիտելիքներն ամրապնդելու գործում:

Մկրտիչ Նաղաշ

«Խրատական բաներս ազահութեան և անընչութեան Նաղաշ վարդապետէ ասացեալ»

Զինչ թագավորք և մեծ իշխան, որ հեծելով յիրար կռուան,
Զինչ որ արիւն յերկիր յեղան, ամէնն վասն ազահութեան.
Զինչ որ քաղաք տապալեցան և ժողովուրդք որ գերեցան,
Զինչ որ աւերք առ և թախտան, ամէնն վասն ազահութեան:⁷

Հովհաննես Թումանյան

«Հառաչանք»

Երեք թագավոր, ասում են, իբրև,
Խելքս չի կտրում, որ էսպես լինի,
Խորհուրդ են արել, որ այսուհետև
Իր թախտից զըրկվի, ով կռիվ անի:

Ո՞վ է իմացել էսպես հրաշք բան:
Էլ ի՞նչ թագավոր կամ էլ ի՞նչ իշխան,
Որ կռիվ չանի, ուրիշին չըտիրի,
Մարդ չըկոտորի, երկիր չավերի...⁸

Բռնակալ ուժի դեմ ուղղված բողոքի մարմնավորողը «Սասունցի Դավիթ» էպոսում արաբ ծերունին է, որ տեսնելով իր երկիրը պաշտպանող Դավթի հաղթական կռիվը՝

⁷ Մկրտիչ Նաղաշ, Աշխատասիրությամբ Էդ. Խոնդկարյանի, Երևան, 1965, էջ 117:

⁸ Հովհ. Թումանյան, Երկեր, հ. II, Երևան, 1958, էջ 36:

մոտենում է նրան ու խնդրելով բացատրում և խորհուրդ է տալիս զենքն անմիջապես ուղղել Մսրա Մելիքի դեմ, որը խոր քուն էր մտել իր վրանում, մինչ իր գորքը կոտորվում էր: Հետաքրքիր է, որ իր յոթ տղաների հետ կռիվ եկած արաբ ծերունին նախապես համոզված է, որ Դավիթը կդադարեցնի կռիվն ու կոտորածը և զենքը կուղղի Մսրա Մելիքի դեմ.

Մըսրա Մելիքի գորքի միջեն մարդ մի էլավ,-
Մեկ ալևոր – յոթ տղու հեր:
Մելիք էնոր յոթ տղեկներ գոռովե՛ն էր բերեր կռիվ:
...-Ճամփա՛ տվեք, էրթամ Դավթի առաջ:
Մի խոսք ասեմ, էսա գորք ազատեմ կովից (էջ 235):

Արաբ ծերունու խոսքերում տեսնում ենք հայ ժողովրդի՝ պատերազմը դատապարտող հավաքական խոսքը: Նախ, ծերունին բացատրում է, թե նրանք՝ այսինքն արաբ զինվորները, մարդիկ են: Մարդը մարդուն իրավունք չունի կյանքից զրկելու, բացի այդ, կա հարազատի կյանքի կորստի համար նրա արյունակիցների անանց վիշտը: Այդ զինվորներն ունեն ընտանիք, կին, երեխաներ. ո՛րն իր մոր մինուճար զավակն է, ո՛րն ընդամենը նոր է ամուսնացել, ո՛րն իր օջախի սյունն է, և բոլորին էլ Մսրա Մելիքը ուժով ու ստիպելով է բերել պատերազմ:

«Մասունցի Դավիթ» էպոսում հնչող ծերունու այս խոսքերն ասված են բոլոր ժամանակների համար. դրանք արդիական են նաև այսօր:

Էպոսի կերպարների համակարգը նպատակահարմար ենք գտնում ներկայացնել ուսուցողական դասի միջոցով, որի հիմնական անձը էպոսն ուսուցանող ուսուցիչն է:

Նախքան աշակերտների կողմից էպոսի յուրացումը ստուգելը, ուսուցիչը հանձնարարում է «Մասունցի Դավիթ» էպոսի բնագրի ուշադիր ու խորասուզված ընթերցումը՝ նախապես բացատրելով որոշ բարբառային բառեր և դրանք գրանցել տալով հայ գրականության համար նախատեսված հատուկ տետրերում. անշուշտ, ներկա աշակերտների մեծ մասն ունի համակարգիչներ և կարող է այդտեղ ունենալ հայ գրականության համար նախատեսված հատուկ բաժին:

Բերենք բացատրության համար խիստ անհրաժեշտ բառերի մի շարք.

Ազապ – չամուսնացած տղա, աղջիկ

ագրայիլ – հոգեառ հրեշտակ

ագնավոր – ագնվական, ագնիվ

աղեկ – լավ, գեղեցիկ

ամանաթ – հավատարիմի մոտ պահ տված որևէ իր

անգյալ – անպետք

ասլան – առյուծ

ավուր – օրերից մի օր

ափռ – պապ
բաղալ – փոխարեն
բիջ – ապօրինի գավակ
բլել – փուլ գալ
բուրջ – բերդ
գյուլ – լիճ
գինաս – գիտես
դավա – ուղտ
դարբ – զարկ
դեհ – կողմ
էկո – արի
էր – այր, քարայր
գապուն – նիհար
գալում – անգութ
գարմ – ցեղ
գենել – գոհել
գոռով – ուժով
թալել – նետել
թասիր – պատիվ
թալակ – թակարդ
թամամ – լրիվ
թոնդիր – թոնիր
թորկել – թողնել
իսկի – բռնորովին
իրիշկել – նայել
լաճ – տղա
լառ – որդի
լավոտել – տակը կեղտոտել
լուլա – խողովակ
խաբրաբեր – լրաբեր
խագինա – հարստություն
խաթր – հարգանք
խարջ – հարկ
խեղել – հաշմանդամ դարձնել
խվրլալ – շարժվել
խորոտ – սիրուն
խոջա – հարուստ, մեծ

կալամ – գրիչ
կարիք – օտարական
կթղա – թաս, բաժակ
կխտար – եղջերու
կոպալ – ձեռնափայտ
կուտ – այրված հաց
կուս – կույս
հալավ – հագուստ
հեծել – հեծյալ
հեյրան – սիրելի
հորի՞ – ինչո՞ւ
դալբ – խարդախ, կեղծ
դափլան – վագր
ճան – վեգ
ճանկ – ափ, բուռ
ճար – հնար
ճիժ – երեխա
ճոթ – կողմ, ծայր
ճվալ – բղավել
մարե – մայրիկ
մաժել – շփել, շոյել
մեջլիս – դիվան, ժողով
մժիկ – մժեղ
մուրազ – իդձ, փափազ
ունկ – կանթ
ուղորդ – ճիշտ
չադր – վրան
չուտ – մերկ
չուր – մինչև
պագել – համբուրել
պոռթել – պատռել
պոունկ – շուրթ
ջանդաք – դիակ
ջիրիդ – ձիարշավ
ջոկ – առանձին
ջոջ – մեծ
ջուխտ – գույգ

ռանդա – փայտահարթիչ գործիք
ռաստ – հանդիպում
սալամաթ – ողջ
սենեկ – սենյակ
սիլա – ապտակ
սոլ – չուստ
վազիր – թագավորության երկրորդ անձը
վերուց – վերցրեց
վեցկի – վեց գույգով լծված գութան
տի- պիտի
տիլ – ցեխ
տղամեր – հղի կին
տռճիկ տալ – ցատկոտել
տփել – ծեծել
քակել – քանդել
քանց – քան
քարգահ – իլիկ
քենե – քեզնից
քեռներ – մորեղբայր
քոշք – պալատ
քոք – արմատ
քոփակ – շնաբարո մարդ
քունջ – անկյուն
քուրսի – թոնրի ծածկ
փարդա – վարագույր
փաթիշահ – թագավոր, արքա
փահլևան – քաջ, հերոս, դյուցազն
փողպատ – օձիք
փալիք – բերանի ջուր
փրչոտ – մազոտ

Այս բառերի բացատրությունն օգտակար է ոչ միայն «Մասունցի Դավիթ» էպոսը ճշգրիտ հասկանալու, նրա բովանդակությունը մտապահելու, այլև հայ նոր գրականության ծրագրային հեղինակների գործերում այդ բառերը հասկանալու համար:

Նշանավոր ռուս գրականագետ Պավել Սակուլինը (1868-1930), որը Խորհրդային Միության Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ էր, իր «Наука о литературе, ее итоги и перспективы» գրքի «Проблема читателя» բաժնում գրում է. «Համընդհանուր և

ռուս գրականության պատմությունը բազմաթիվ օրինակներով կարող է նկարագրել գրականության իշխանությունը սրտերի և մտքի վրա»⁹:

«Մասունցի Դավիթ» էպոսի դարավոր պատմությունն ապացուցում է, թե ինչպես է բանահյուսական այդ գանձը դարեր ի վեր ոգևորել հայ ժողովրդին, իշխել նրա մտքի ու սրտի վրա և հասել նոր ժամանակներին ու այսօր էլ իր գաղափարներով խիստ այժմեական է և հուզիչ:

Ուսուցիչը պարտավոր է այնպես ներկայացնել էպոսի գլխավոր կերպարներին, որ նրանք ազդեն աշակերտի, նաև ուսանողի սրտի ու մտքի վրա:

«Филологический анализ художественного текста» գրքում խորհուրդ է տրվում գեղարվեստական բնագիրը կարդալ դանդաղ և ներթափանցել նրա իմաստային խորքերը, որովհետև կենտրոնացած և ուշադիր ընթերցումը երևան է հանում բնագրի դժվար հատվածները և անհասկանալի մասերը դարձնում է հասկանալի:¹⁰

Այս դրույթը շատ կարևոր է ուսուցչի համար: Նա վերցնում է էպոսի որևէ կարևոր հատված, դանդաղ կարդում դասարանում և առաջարկում աշակերտներին կամ ուսանողներին բացատրել, թե ինչպես են հասկանում նրանք այդ հատվածը: Բերում ենք հարմար հատվածը էպոսից. այն պատկերում է Փոքր Մհերի ծնունդը: Բարուրելիս նորածին Մհերին փաթաթում են գութանի շղթաներով, սակայն նորածինն օրորոցում ճակոտում է, և շղթաները կտոր-կտոր են լինում.

Դե՛հ, Դավթից ու Խանդութից
Մանդր տղա հո չ'ըլներ...
Տեսան որ՝ Ազնանցորդի՛ է:
Համա տղան, որ կը լողկըցուցեն,
Տեսան՝ մեկ ձեռ խուփ է:
Ինչ ճար արին – չարին,
Տղի ձեռ չը բացվավ,
Քաղաք քաղքով չեն կա՛րնա էնոր ձեռք բանա.
Վաչոն էլավ իրեն ահուն,
Նամակ գրեց Դավթի քեռուն.
«Թորոս, աչքդ լուս ըլնի.
Դավթին տղա մի էղեր է,
Մենակ մի ձեռք խեղ է»:
Թորոս որ էղ նամակ կարդըցավ,
Էլավ, հեծավ Վեցոտնեն Լազգին,
Էկավ, հասավ Կապուտկոդ.

⁹ П.Н.Сакулин, Наука о литературе, ее итоги и перспективы, Москва, 2011, с. 167 («История всеобщей и русской литературы может многочисленными примерами иллюстрировать власть литературы над сердцем и умами»).

¹⁰ Н.М.Шанский, Ш.А.Мамедов, Филологический анализ художественного текста, Москва, 2010, с. 7-8.

Էկավ, Վաչոյի տուն, ասաց,
-Հըլա տղի բարուր տվեք,
Աչքեմ իմա՛լ տղա է:
Թորոս առավ ըգտղան, տեսավ,
Զմանուկի ձեռք մաժեց, մատներ բացվան.
Տեսավ, կաթ մի արուն ձեռքի մեջ.
Ասաց.- Հա՛յ, հա՛յ, թե քար էսօր մուտ տա, մուտ տա,
Հող չի կարնա պահի,
Զաշխարք արեր է կաթ մի արուն,
Դրեր է ձեռքին:
Թէ որ էղի մնաց,
Էդոր մոտեն գարմանալի բան տ'էլնի:
Մնաց էրկու - իրեք օր,
Խանդութ տղան էտու կնքել,
Անուն էղիր Մհեր (էջ 285):

Լույս աշխարհ գալու պահից արդեն կանխորոշված էր Փոքր Մհերի ճակատագիրը: Եթե ուսանողը կամ աշակերտը կարդացել է Էպոսի չորրորդ՝ «Փոքր Մհեր» ճյուղը, կհասկանա, որ Քեռի Թորոսի կանխագուշակումը մարգարեական էր:

Ուսուցիչն ուշադրություն է հրավիրում այն փաստի վրա, որ Մհերին հետաքրքրելու է ոչ միայն իր երկրի, այլև հանուր մարդկության ճակատագիրը: Նա դառնալու է մարդկության չար ուժերի դեմ կռվող խիզախ մարտիկը, սակայն պարտվելու և փակվելու է Ագռավաքարում՝ մարդկության երջանիկ օրերի հույսով: Ահա թե ինչ է բացատրում Մհերը Ագռավաքար մտած հովվին.

Քանի աշխարք չար է,
Հողն էլ դալբցեր է,
Մեջ աշխարքին ես չեմ մնա:
-Որ աշխարք ավերվի, մեկ էլ շինվի,
Երբոր ցորեն էղավ քանց մասուր մի,
Ու գարին էղավ քանց ընկուզ մի,
Էն ժամանակ հրամանք կա, որ էլնենք էդտեղեն:
Հովիվ որ դուրս կ'էլնի,
Քար կը գա, կը հասնի իրարու (էջ 320):

Ուսուցիչը կամ դասախոսը փաստում է, որ Մհերի կերպարի նախատիպը եղել է հեթանոս հայերի կիսաստված Արտավազդը, որին սպասում էին հայերը լավ օրերի հույսով. «...այնպես էլ դևերի մոլորությունը խաբեց կռապաշտներին, թե Արտավազդ անունով մեկը բանտարկված է դևերի կողմից, որը մինչև այժմ կենդանի է, նա էլ ելնելու և

տիրելու է աշխարհը»¹¹: Այս փաստը պերճախոս վկայություն է այն բանի, որ մարդկային մտածողության դրսևորումները փոխանցվում են դարեդար՝ ենթարկվելով որոշ փոփոխությունների:

Կերպարների ուսուցման ժամանակ ուսուցանողը հատուկ նշում է «Սասունցի Դավիթ» էպոսի կերպարների բազմազանությունը: Դրանք գլխավոր են, նաև երկրորդական ու դրվագային:

Սասնա դյուցազունները, նրանց կանայք ունեն շատ ընդհանուր գծեր, սակայն խորապես անհատականացված են: Հարկավոր է առանձնացնել դյուցազունների ու նրանց կանանց կերպարների այն տարբերիչ գծերը, որոնցով նրանք դառնում են առավել հետաքրքիր:

Սանասարի կերպարի համար ուշագրավ դրվագ է նրա՝ տիտանական ուժի տեր դառնալը: Սանասարը մտնում է ծովը, տեսնում գեղեցիկ պալատ պարտեզով: Այնտեղ գտնում է ծովային ձիուն՝ Քուռկիկ Ջալալուն, որի վրա կախած էր Թուր Կեծակին, և դրան էլ ավելանում է Խաչ Պատերազմին: Սանասարն այնպիսի հսկա է դառնում, որ Բաղդասարն այլևս նրան չի ճանաչում.

Սանասար քշեց զձին, բաղչով կ'երթար,
է՛լի ճամփին ծով բացվեց,
Մեկ էլ տեսավ ծովու էրես,
Դուրս էլավ, որ գա աղբոր մոտ:
Աղբեր գետին նստած կը լար.
Տեսավ՝ մեկ սար էլեր սարի վերա, կը գա (էջ 42):

Մեծ Մհերի կերպարը ներկայացնելու համար խիստ բնութագրական է առյուծին պատռելու տեսարանը: Նախ. բացահայտվում է Մհերի հոգատարությունն ու պատասխանատվությունը սեփական ժողովրդի նկատմամբ (չէ՞ որ երկրին սպառնում էր սովը) և երկրորդ՝ Մեծ Մհերը՝ **որպես խիզախ առաջնորդ**, ինքն է լուծում իր երկիրը առյուծից ազատելու խնդիրը.

Մհերի հետ գնացած մարդիկ հեռու կանգնան.
Մհեր մենակ գնաց:
Գնաց, ինք ու առյուծ առան իրար:
Մհեր կանչեց.- Հացն ու գինին, տեր կենդանին:
Կանչեց, մի ձեռ թալեց էդ առյուծի վերի ծնոտ,
Մյուս ձեռ թալեց ներքի՝ ծնոտ,

¹¹ Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Թարգմանությունը և ծանոթագրությունները Ա.Ա.Աբրահամյանի, Երևան, 1970, էջ 80-81:

Ճղեց էդ առյուծ մեջտեղեն,

Արեց էնոր էրկու կտոր:

Մեկ դրեց ճամփու էս դին, մեկել՝ էն դին (էջ 106):

Սասունցի Դավթի կերպարը ամենազլխավորն է այդ կերպարում առկա են հայ ժողովրդի ազգային բնավորության լավագույն գծերը:

Հեգելը խոսել է Հոմերոսի «Իլիականի» կերպարների մասին և խիստ դիպուկ բնութագրել հունական էպոսի գլխավոր հերոսին՝ Աքիլլեսին. «Հոմերոսի մոտ. օրինակ, ամեն հերոս իրենից ներկայացնում է մարդկային գծերի և հատկությունների կենդանի ամբողջություն: Աքիլլեսն ամենաերիտասարդ հերոսն է, բայց նրա պատանեկան ուժին հասուն է, հիրավի, ուրիշ մարդկային գծեր, և Հոմերոսը մեր առաջ բացում է նրա բնավորության գծերի բազմազանությունը՝ նրան դնելով ամենատարբեր իրավիճակներում»¹²:

Հեգելյան դրույթից ելնելով՝ կարող ենք ասել, որ հայ ժողովրդական էպոսում էլ հավաքական ժողովուրդն իր սիրելի հերոսին՝ Դավթին, դնում է ամենատարբեր կենսական իրավիճակներում և կերտում, հիրավի, անմոռաց կերպար: Դավթին արտասովոր մանուկ է. մեծանում է ոչ թե օրերով, այլ ժամերով, արտակարգ ուժի տեր է, ունի մանկական միամտություն, սակայն միաժամանակ խելացի է ու շրջահայաց. դրա համար էլ Բաթմանա կամրջի վրա ահաբեկում է իրեն Մսրա Մելիքի հրամանով սպանել կամեցող ծառաներին և նրանց խոստովանությունից հետո մեծահոգաբար ազատ է արձակում: Դավթի բնավորության հիմնական գծերից է մեծահոգությունը: Դավթին անսահման սիրում է իր հայրենի եզերքը, հարազատներին, հասարակ ժողովրդին և շարունակ օգնում է նրանց: Նա բարի է ու աստվածավախ: Տանել չի կարողանում ոչ մի բռնություն: Նույնիսկ քանդում է Ծովասարի պարիսպները և ազատ արձակում վայրի զազաններին: Դավթին անհարիր են նենգությունն ու խարդախությունը. հավատում է Մսրա Մելիքի սիրալիր խոսքերին ու ընկնում նրա պատրաստած փոսը: Դավթի Մսրա Մելիքի հետ մենամարտելիս Իսմիլ խաթունին ու նրա աղջկան է բաշխում առաջին էրկու զարկերը՝ ի նշան երախտագիտության. վերջիններս մանուկ ժամանակ խնամել են իրեն:

Ուսուցիչն ուրույն ձևով ներկայացնում է Դավթի մեծահոգությունն ու վեհանձնությունը.

ա) Դավթին արթնացնում է Մսրա գործին կովից առաջ

Գնաց, էլավ Լեռա սարի գլուխ, կանչեց. -«Էհե՛յ,

¹² «Хрестоматия по теории литературы», Пособие для студентов, Москва, 1982, с. 167 («У Гомера, например, каждый герой представляет собой живую совокупность свойств и черт характера. Ахилл является самым юным героем, но его юношеской силе свойственны и другие подлинно человеческие качества, и Гомер раскрывает перед нами это разнообразие черт его характера, ставя его в различнейшие ситуации»).

Ով քրնած է՝ արթո՛ւն կացեք,
Ով արթուն է՝ ձիե՛ր թամբեք,
Ով թամբեր է՝ զենքե՛ր կապեք,
Ով կապեր է՝ էլե՛ք, հեծե՛ք,
Չ'ասեք Դավիթ գող - գող էկավ,
Գող - գող գրնաց» (էջ 234):

բ) Դավթի դիմումը Մսրա գորքին հաղթանակից հետո

Դավիթ ձիու գլուխ շրջեց,
Էլավ, գրնաց մեջ գորքերին,
Ինչ գորք գորական մնացե՛
Կանչեց, հրամայեց, ասաց.
-Ամենիդ իրավունք կը տամ.
Ուր տեղեն էկեր եք՝ էլեք, գնացեք ձեր տեղ:
Էլեք, գնացեք ու ձեր տներ նստեք,
Դուք ինձ համար աղո՛թք արեք,
Իմ հորն ու մորն էլ օղորմի՛ տվեք.
Հանդա՛րս կացեք,
Մեկ էլ չ'էլնեք ու գաք վեր Սասնա:
Մեկ էլ որ զենք առնեք մեր դեմ,
Թե որ դուք կովի գաք վեր մեզ՝
Քառսուն գազ խոր հորում ըլնեք,
Թե ջաղացի ջոջ քարի տակ,
Տ'էլնի ձեր դեմ Սասնա Դավիթ,
Տ'էլնի ձեր դեմ Թուր Կեծակին (էջ 247):

Սասունցի Դավթի կերպարին հատուկ հմայք է տալիս նրա սիրո պատմությունը և առ Խանդութ ունեցած վերաբերմունքը: Ամեն ինչ այնքան բնական է, կենդանի, որ կարծես մի գեղեցիկ սիրավեպ լինի հավերժական սիրո մասին:

Սասնա դյուցազունների կերպարներն ընթերցողի հիշողության մեջ մնում են անմոռաց. դրա հիմքը ժողովրդական ասացողների հանճարի դրսևորումն է, որն առկա է նաև ուրիշ էպոսներում:

Մարիետա Շահինյանը, որը հանրագիտակ գրող էր, ֆիննական էպոսի՝ «Կալեվալայի» ռուսերեն թարգմանության առաջաբանում գրում է. «Երբեք չմոռացվող հզոր մարդկանց կերպարներ, բնության վիթխարի պատկերներ, ճշգրիտ նկարագիր

աշխատանքային պրոցեսի, հագուստի, գյուղական կենցաղի,- այս բոլորը մարմնավորված է «Կալեվալայի» վիպական բարձր պոեզիայում»¹³:

«Սասունցի Դավիթ» էպոսում Սասնա դյուցազունների կերպարները ևս պատկերված են բանաստեղծական խոսքի կատարյալ չափանիշներով:

Առանձնակի ձևով էպոսի ուսուցանողը կանգ է առնում կանանց կերպարների վրա, որոնք խիստ տարաբնույթ են:

Դրանց ընդհանրության մեջ ուսուցանողն առանձնացնում է Սասնա դյուցազունների կանանց, որոնք անսահման նվիրում ունեն իրենց ամուսիններին, Հայաստանին և ամուսնական հավատարմության մարմնավորումներ են: Այդպիսին է Սանասարի կինը՝ Դեղձուն Ծամը, որ Մեծ Մեերի մահից հետո փակվում է մութ սենյակում և մտնում խոր սգի մեջ. սուգը թողնում է միայն այն ժամանակ, երբ լսում է Քուռկիկ Ջալալու խրիսինջը ու իմանում, որ Դավիթը Սասունը պաշտպանելու համար կռվելու է Մելիքի դեմ: Ծեր կինը դիմում է Քուռկիկ Ջալալուն և աղերսում փրկել նորամանուկ Դավթին.

Իմ Դավիթ հե՛ր չո՛ւնի՝ անես հերություն.

Իմ Դավիթ մե՛ր չունի՝ անե՛ս մերություն,

Իմ Դավիթ աղբեր չո՛ւնի՝ անե՛ս աղբերություն,

Իմ Դավիթ դու տանես իր հոր Կաթնով Աղբուր,

Դավիթ ձիուց իջնի, իջնի ջուր խըմի,

Իմ Դավիթ դու տանես իր հոր փորձաքար-

Դավիթ իր թուր զարկի, զարկի սան, փորձի (էջ 230):

Իսկ որքան հայրենասեր է Արմաղանը. նա ներում է ամուսնուն Սասնա տան ծուխը չկտրելու, ազգի հարատևության համար, առաջնորդ ունենալու մղումով, ինքնակամ ընդհատում է իր կյանքը, որի պայման-հետևանքով լույս աշխարհ է գալիս Դավիթը՝ Սասնա դյուցազունների մեջ ամենահմայիչն ու հզորը:

Դավթի և Խանդութի սիրո պատմությունն իսկական սիրավեպ է. նրանում նրբորեն պատկերված են ն՛ սիրո տվայտանք, ն՛ սիրո վայելք, նաև կյանքում հազվադեպ հանդիպող հավերժական սեր: Համոզվելով, որ Դավիթն այլևս կենդանի չէ, Խանդութն իրեն ցած է նետում բերդի աշտարակից, ու նրա կրծքի զարկվելու տեղում բխում են երկու սառնորակ աղբյուրներ, որոնք խորհրդանշում են Դավթի և Խանդութի հավերժական սերը:

Իր ամուսնուն անմնացորդ նվիրված է նաև Գոհարը, որը մահվանից առաջ թողնում է հետևյալ կտակը.

¹³ «Калевала», Перевод с финского, Вступительная статья Мариэтты Шагинян, Москва, 1977, с. 31 («Мощные образы людей, навсегда вам запоминающиеся, грандиозные картины природы, точное описание процессов труда, одежды, крестьянского быта - все это воплощено в рунах «Калевалы» в высокую поэзию»).

Մեջ գրուկ. «Քենե կը խնդրեմ՝
Ինչ ժամանակ դու գաս, ինձի տեսնես,
Ինձի տանես Սասուն,
Խանդութ խանումի կուշտ թաղես» (էջ 316):

Մանրամասն ներկայացվում են մյուս կին հերոսները՝ Ձենով Հովանի կինը՝ Սարիեն, Չմշկիկ Սուլթանը, Իսմիլ Խաթունը և, վերջապես, Դավթի ուժը նպատակաուղղող արտատեր պառավը: Անհրաժեշտ է ընդգծել այն հանգամանքը, որ հայ կանանց ժողովուրդը օժտել է դրական, իսկ այլազգի հերոսուհիներին՝ բացասական գծերով:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԷՊՈՍԻ ԺԱՆՐԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՄՔԸ, ԱՐՎԵՍՏԸ

Էդ. Ջրբաշյանի և Հ.Մախչանյանի «Գրականագիտական բառարանում» էպոսը, դյուցազնավեպը կամ վիպերգությունը բնութագրվում է որպես «ժողովրդական բանահյուսության հնագույն և կարևորագույն ժանրերից մեկը»¹: Նշվում է, թե էպոսում ամեն մի ժողովուրդ մարմնավորում է ազատության ու անկախության համար մղած իր պայքարը: Այսօրինակ ժանրային բնութագիր տեսնում ենք այլալեզու բառարաններում, դասագրքերում և հետազոտություններում:

Ֆրանսիական գրականության ուսուցման մեթոդական դասագիրքն էպոսը բնորոշում է հետևյալ ձևով. «Դյուցազներգություն – հերոսական իրադարձությունների բանաստեղծական պատում, որում խառնված են իրականն ու գերբնականը»²:

Ռուսերեն բացատրական բառարանում կարդում ենք. «էպոս – ամբողջություն ժողովրդական հերոսական երգերի, ասքերի, պոեմների՝ միացած ընդհանուր թեմայով և համազգային պատկանելությամբ»³:

Գարեգին Սրվանձտյանցն էլ շեշտում էր «Սասունցի Դավիթ» էպոսի պատմականությունն ու խիստ ազգային բնույթ ունենալը:

Ուսուցիչը պարտավոր է իմանալ տարբեր էպոսներում եղած որոշ ընդհանրություններ, որոնք կապվում են մարդկության հնագույն ժողովուրդների մտածողության և նրանց փոխշփումների հետ:

Հովսեփ Օրբելին «Սասունցի Դավիթ» էպոսում տեսնում է վաղնջական ժամանակների մայրատիրության հետքեր, կոսմիկական հնագույն պատկերացումներ. «Սասունցի Դավիթ» էպոսում հին հայերի հնագույն պատկերացումները, հնադարյան առասպելները, որոնք ստեղծվել են Հայաստանի նախապատմական կյանքի հազարամյակների ընթացքում, և ականատեսների ու նրանց հետնորդների հիշողության մեջ դրոշմված պատմական իրադարձությունները միաձուլվել, մի միասնական ամբողջություն են կազմել, երանգավորված պատմականության արտաքին երևույթով»⁴:

Տարբեր ազգերի որոշ էպոսներ արժանացել են միջազգային ճանաչման և ունեն համաշխարհային հռչակ: Դրանցից են Հոմերոսի «Իլիականն» ու «Ոդիսականը», Ֆիրդուսու «Շահ Նամեն»: Այս երկու էպոսներն էլ հայ կրթված խավին հայտնի են եղել:

¹ Էդ. Ջրբաշյան, Հ.Մախչանյան, Գրականագիտական բառարան, Ընդհանուր խմբագրությամբ Էդ. Ջրբաշյանի, Երևան, 1972, էջ 280:

² D.Labouret, A. Meunier, Les Méthodes du français au lycée, Paris, 1996, p. 285 (“Épopée:recit en vers d’événements héroïque mêle le réel au surnaturel”).

³ Словарь русского языка, т. IV, С-Я, Москва, 1988, с. 765 (Эпос 2. Совокупность народных героических песен, сказаний, поэм, объединенных общей темой, общенациональной принадлежностью»).

⁴ «Սասունցի Դավիթ», էջ XXXVI:

Դեռևս XIV դարում Կոնստանդին Երզնկացին իր տաղերից մեկի ենթախորագրում բացատրում է, թե իր տաղը պետք է կարդացվի «Շահ Նամեի» ձայնով. «Այր մին... էլ կայր ու Շահնամայ ասէր ձայնով. նա եղբայրք խնդրեցին թէ ի Շահնամայի ձայն մեզ ոտանաւոր ասայ. ես շինեցի զբանքս զայս ի Շահնամայի ձայն կարդացեք»⁵:

Մասնագիտական բառարանը նշում է, թե Աբուլ Կասիմ Ֆիրդուսին (940-1020) իր «Շահ Նամեն» («Թագավորների գիրքը», («Book of Kings») գրելիս աչքի առաջ է ունեցել պարսից արքաների մոտավորապես մ.թ.ա. 3600-ից մինչև մեր թվարկության 651 թվականը»:⁶ («A poetic history of Persian rulers from about 3600 B.C. to A.D.651»).

«Շահ Նամեն» ծանոթ է եղել նաև հանճարեղ Սայյաթ-Նովային, որը «Դուն էն գլխեն իմաստուն իս» խաղում Վրաստանի արքա Հերակլ Երկրորդին անվանում է Ռոստոմ Ջալ.

Չը կա քիզ պես հուքմի - հեքիմ. դուն Բոստոմի Ջալ՝ թաքավոր.
Ասկըտ ասկերումըն գոված՝ համդ ունիս, գոզալ թաքավոր:⁷

Հայերը մեծ հետաքրքրություն են ունեցել դեպի հունական էպոսը. դրա մասին վկայում է պատմահայր Խորենացին իր «Հայոց պատմության» տարբեր հատվածներում: Նա նույնիսկ կշտամբում է իր սիրելի մեկենասին՝ Սահակ Բագրատունուն, որի շտապեցնելու պատճառով ոչինչ չի գրում «Եղիական պատերազմի» (Իլիական) մասին, որի ժամանակ հայերի Չարմայր Նահապետը սակավաթիվ մարդկանցով օգնել է Պրիամոսին ու ընկել հելլենացի քաջերի ձեռքով: Սակայն ինքը կկամենար, որ նա զոհվեր Աքիլլեսի ձեռքից:⁸

Ուսուցիչը պարտավոր է իմանալ, որ «Իլիականը» դեռևս 1864 թվականին հունարենից հայերեն է թարգմանել հայկական կլասիցիստական գրականության հիմնադիր, Մխիթարյան միաբանության նշանավոր անդամ Արսեն Կոմիտաս Բագրատունին: Թարգմանությանը կցված սեղմ «Հոմերոս» խորագիրը կրող նախաբանում նա նշում է, թե Հոմերոսի երկու գործերը «գրեթե պաշտեցեալ յամենայն հանճարեղաց ազգաց եւ ազանց»⁹: Ողջ միջնադարում հայ քերականներն իրենց մեկնություններում Հոմերոսի երկու գրքերը համարում են բանաստեղծական խոսքի կատարելություն:

⁵ Կոնստանդին Երզնկացի, Լոյսն առաւօտուն, Երևան, 1981, էջ 102:

⁶ The Readers Companion to World Literature, London, 2002, p. 266.

⁷ Սայյաթ-Նովա, Հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն խաղերի ժողովածու: Կազմեց, խմբագրեց և ծանոթագրեց Մորուս Հասրաթյանը, Երևան, 1963, էջ 20:

⁸ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, էջ 105-107:

⁹ Հոմերի Իլիական, Հան ի հայ հ. Արսեն Կոմիտաս Բագրատունի ի Մխիթարեանց, Վենետիկ, 1864, նախաբան:

XIII դարի նշանավոր ուսուցչապետ, մատենագիր, փիլիսոփա, քերական Հովհաննես Երզնկացին հայ կրթական աշխարհում խիստ պարտադիր էր համարում հունական էպոսի ուսուցումը. «...յաղագս ուսման մանկանց դիրաւ յերկուս գիրս՝ յԲլիակոն եւ յՌդիսակոն ի քսանէչորս ճառս»¹⁰: Առաքել Սյունեցին էլ «Յաղագս քերականութեան համառատ լուծմունք» երկում հաճախակի օրինակներ է բերում Հովհաննէսից:¹¹

«Սասունցի Դավիթ» էպոսը ձևավորվել է VIII-X դարերում, երբ հայ ժողովուրդն օրհասական կոթիվ էր մղում արաբ նվաճողների դեմ:

Ուսուցչին ծանոթ են երեք հայ պատմիչները, որոնք ստեղծագործել են արաբական զավթիչների դեմ մղված պայքարի տարիներին: Դրանք են՝ Ղևոնդ-VIII դար, Թովմա Արծրունի և Հովհաննես Դրասխանակերտցի – X դար:

Արաբների՝ դեպի Հայաստան կատարած առաջին արշավանքները նկարագրում է Սեբեոսը: Սակայն էպոսի ձևավորման համար առավել կարևոր են VIII և IX դարերի մի քանի հուժկու ապստամբությունները, որոնք հայ ժողովուրդը մղել է արաբական լծի դեմ: Ամենահուժկու ապստամբությունը բռնկվել է 774-775 թթ. և ցնցել ամբողջ խալիֆայությունը:¹² Այս ըմբոստությունն ավարտվում է հայերի պարտությամբ: Հայերի հաղթանակով է ավարտվում խուբեցիների ապստամբությունը, որը տեղի է ունեցել 851 թվականին: Այդ ապստամբությունը մանրամասն նկարագրել է Թովմա Արծրունին:¹³

Ղևոնդ պատմիչը նկարագրում է, թե ինչպես արաբական խալիֆաթը դաժանորեն ոչնչացնում էր հայ նախարարներին՝ պարզորեն հասկանալով, որ միայն նախարարների ջանքերով էր հնարավոր վերականգնել հայկական պետականությունը:

Արաբների գործի գլխավորը՝ Մահմետը, Հայաստանի նախարարներին իրենց հեծյալներով կանչում է իր մոտ, լցնում Նախիջևանի և Խրամ ավանի եկեղեցիները, փակել տալիս դռները և հրկիզում: Այդ դեպքերը տեղի են ունեցել VIII դարի սկզբին (705թ.) և հայտնի են Կրակի տարի անունով. «Նախճիվանի և Խրամի բարբարոսական գործողությունների նկարագրությունը տալիս են ոչ միայն հայ, այլև բյուզանդացի, ասորի և արաբ պատմիչները»¹⁴:

«Սասունցի Դավիթ» էպոսի պատմական հիմքի իմացությունը շատ կարևոր է ուսուցանողի համար, որովհետև իր հարուստ գիտելիքներով նա հիմնավորում է ասելիքը: Ն. Ադոնցը, խոսելով բյուզանդական «Վասիլ Դիգենիս Ակրիտաս» էպոսի մասին, մեծ ընդհանրություններ է տեսնում նրանց և մեր էպոսի հերոսների նկարագրում

¹⁰ Հովհաննես Երզնկացի, Հաւաքումն մեկնութեան քերականի, Լոս Անջելէս, 1983, էջ 156:

¹¹ Առաքել Սյունեցի, Յաղագս քերականութեան համառատ լուծմունք, Լոս Անջելէս, 1982, էջ 71, 86, 87, 101, 156, 174:

¹² Հայ ժողովրդի պատմություն, հ. II, Երևան, 1984, էջ 243:

¹³ Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, էջ 135-138:

¹⁴ Ղևոնդ, Պատմություն, Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1982, էջ 147:

և ասում է, որ երկու էպոսներն էլ, ծագելով IX դարում, իրենց վրա են կրել հետագա դարերի ազդեցությունը:¹⁵

Տեղին է ներկայացնել, թե Բագրատունիների հայ թագավորությունը հաստատվելուց հետո էլ արաբները շարունակում էին ասպատակել Հայաստանն ու սպառնում ազգային անկախությանը: Այդ հարձակումներն ուժեղացան Աշոտ Երկաթի գահակալության տարիներին: Եվ ահա այդ ժամանակահատվածում է հանդես գալիս Գևորգ իշխանը, որն ընդամենը քսան քաջերով հաղթում է արաբ զորավար Բեշիրի զորքին: Այդ փաստն էլ ընկած է «Գևորգ Մարգարետունի» պատմավեպի հիմքում. «Իսկ Բշրըրը երբ անսպասելիորեն դուրս է գալիս նրա դեմ, Գևորգը իսկույն սարսափահար է լինում, որովհետև նրա հետ քսանից ավել մարդ չկար, իսկ Բշրիինը մոտավորապես հազար մարդ էր: Սակայն Տիրոջ վրա հույս դնելով՝ Գևորգը սպասում էր նրանց հաղթելու հույսով: Եվ ապա քաջապնդված ու սրտապնդված՝ նա ձի է հեծնում և արիաբար գրոհելով նրանց դեմ՝ շատերին թավալզուր անում»¹⁶:

«Սասունցի Դավիթը» բարձրարվեստ ստեղծագործությունն է: Նրա արվեստի տարրերը լայնորեն կապված են բանահյուսությանը հատուկ պոետիկայի հատկանիշների հետ: Հայկական էպոսը լի է չափազանցություններով, և այս առումով այն մոտ է նաև՝ հնագույն առասպելներին, և՛ հրաշապատում հեքիաթներին:

Ուսուցանողը բացատրում է, որ բանահյուսական գործերում խախտվում են ժամանակի ու տարածության չափանիշները: Դրա դրսևորումները տեսնում ենք «Սասունցի Դավիթ» էպոսում: Օրինակ՝ Քեռի Թորոսը սպրում և գործում է էպոսի բոլոր ճյուղերում և իր խորհուրդներով ընթացք տալիս դյուցազունների արարքներին: Նրան հանդիպում ենք և՛ Ծովինարի ամուսնության ժամանակ, և՛ Փոքր Մհերի ծնունդի դրվագում: Քուռկիկ Ջալալին էլ գործում է բոլոր ճյուղերում ու վերջում էլ մնում անմահ:

Էպոսում շատ-շատ են կրկնակները (ռեֆրենները): Հաճախ կրկնվում են յոթ, քառասուն, հազար թվերը: Կոբբադիինը Մսրա Մելիքից պահանջում է իրեն տալ հազար փահլևան, որպեսզի Սասունից բերվող հարկի հետ Մսր բերի նաև.

Քառասուն երկեն կնիկ բերեմ՝ ուղտեր բառնան,
Քառասուն կոլոտ կնիկ բերեմ՝ երկանք աղան,
Քառասուն ազապ աղջիկ բերեմ քեզ արմաղա՛ն:
Քառասուն արջառ, քառասուն երինջ,
Քառասուն ուղտու բեռով արծաթ,
Քառասուն ուղտու բեռով ոսկի՛ բերեմ – քե խա՛րջ,
Սասուն անեմ առ ու թալան (էջ 203):

¹⁵ «Վասիլ Դիգենիս Ակրիտաս», Երևան, 1978, էջ 170:

¹⁶ Հովհաննես Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, Երևան, 1996, էջ 355:

«Սասունցի Դավիթ» էպոսը գրված է բարբառով, սակայն առանց բառարանի էլ այն հասկանալի է հայ գրական լեզուն իմացող յուրաքանչյուր գրագետ մարդու համար:

Ժողովուրդը սիրով լսել է էպոսում եղած չափազանցությունները. չէ՞ որ չափազանցություններով լի են Հովերոսի երկու պոեմները, որոնք այսօր էլ հուզում են մարդուն:¹⁷

«Սասունցի Դավիթ» էպոսը լի է հայ ժողովրդի հավաքական մտածողության մեջ եղած իմաստուն մտքերով, նաև առած – սասցվածքներով: Ահա երկու օրինակ՝

1. «Աշխարհ գութանի մոտ կլիանա» (էջ 269):

2. «Ասաց.- Դու քո հոր կտրիճն ես, ես էլ իմ» (էջ 269):

Էպոսի արվեստի ցուցիչներից է նաև կերպարների բազմազանությունն ու նրանց իրական և անմոռաց անհատականություններ լինելը:

Երկու հիմնական հակառակորդներն են Փոքր Մսրա Մելիքը և Սասունցի Դավիթը, որոնք Մեծ Մհերի որդիներն են: Վենի դիագրամի միջոցով ուսուցիչը ներկայացնում է այդ երկու կերպարների նմանություններն ու տարբերությունները: Նրանք նման են իրենց հսկա ուժով, պարզապես շատ տարբեր են մարդկային առաքինություններով: Մսրա Մելիքը Սասունցի Դավթի հակապատկերն է իր դաժանությամբ, նենգությամբ ու չարությամբ: Ողջ երրորդ ճյուղը հարուստ է Մելիքի ստոր արարքների նկարագրությամբ: Մելիքը նույնիսկ գորահավաքի հրամանը գրում է ոչ թե մելանով, այլ սեփական արյունով.

Իրեք կողմնն աշխարհի Մսրա Մելիքի ձեռն էր.

Մենակ մե՛կ կողմն աշխարհի Դավթի հայրենիքն էր.

Մելիք կանչեց, իրեն իշխաններ ժողովեց,

Հետո բերավ, տաշտ մի դրեց իրեն առջև,

Աձելի զարկեց իրեն ճակատին,

Արուն թափվեց, տաշտ լցրեց:

Բացեց Մելիք մեկ թուղթ,

Էն արնով գրեց գորականչ (էջ 217):

Այս դրվագով ժողովուրդը ներկայացնում է Մսրա Մելիքի արյունաբքու և վրեժխնդիր անձնավորություն լինելը:

Եթե Դավիթը զգայուն է, սիրում է Սասնա տանտիկիներին, աղջիկներին, որոնք իր համար եղել են մայրեր և քույրեր, ապա Մելիքը բիրտ ու անզգա մարդ է. նույնիսկ նրան քնից արթնացնելու համար հարկ է դիմել ծայրահեղ միջոցների: Ահա թե ինչ չափազանցված ձևերով են Մելիքին արթնացնում.

¹⁷ В. П. Аникин, Русская народная сказка, Москва, 1977, с.10.

Էլան՝ շամփուր կարմրցուցին,
Դրին Մելիքի ոտների տակ:
Ասաց.- Օ՛ֆ, աղջիկներ,
Ինչի՞ իմ տեղ լավ չեք շինե.
Լո՛ւ կա իմ տեղ, ինձ կը խածե:
Ասաց, էլի մնաց քնուկ (էջ 297):

«Մասունցի Դավիթ» էպոսում հայ ժողովուրդն օգտագործել է հումորն ու սպանիչ սարկազմը: Մտերմական հումորով ծաղրվում է Մասունցի Դավիթը, իսկ սպանիչ ծաղրով ներկայացվում են Մսրա հարկահանների պարագլուխը՝ Կոզբաղինը, նաև Մսրա Մելիքը: Դավիթը պատանի հասակում դառնում է գառնարած, սակայն գառների և ուլերի հետ սարից բերում է նապաստակներ ու աղվեսներ.

Դավիթ մըտավ էդ քարայր,
Փետ մի զարկեց. մեկ էս քարին, մեկ էն քարին.
Կուզեր, աղվես, նապաստակներ ամեն դո՛ւրս թափվան:
Ձենով Հովան տեսավ՝ աղվեսներո՛ւն,
Նապաստակներուն կ՛ասի Դավիթ ըսպիտակ ուլ:
Նապաստակներ, աղվեսներ ամեն փախան (էջ 167):

Սարկազմով արաբ կանայք ծաղրում են Կոզբաղինին, որը պատռված գլխով ու ձեռնունայն վերադառնում է Մասունից.

- Այ, Կոզբաղին, մեծաբերան,
Կերթիր Մասուն՝ բերես թալան՝
Քառսուն էրկեն կնկտիք բերես՝ ուղտեր բառնան,
Քառսուն կարճլիկ կնկտիք բերես՝ էրկանք աղան,
Քառսուն կոյս աղջիկ բերես արմաղան,
Քառսուն բեռով ոսկի, արծաթ բերես թալան...
Իդա դիհեն գացիր՝ քանց գել գագան,
Ու էն դիհեն էկար՝ քանց շուն վագան (էջ 212):

Այսօրինակ հակադրություններն առկա են բանահյուսական շատ գործերում: Ինչպես օրինակ՝ նմանատիպ խիստ հակադրություններ կան «Հայկ և Բել» առասպելում (Հայկի և Բելի), «Արա Գեղեցիկ և Շամիրամ» (Արայի և Շամիրամի), «Տիգրան և Աժդահակ» (Տիգրանի և Աժդահակի):

Ուսուցանողը գլխավոր հերոսների խիստ հակադրման սկզբունքի համար օգտագործում է Վենի դիագրամը, որի միջոցով հենց աշակերտը կարող է առանձնացնել Մասունցի Դավթի և Մսրա Մելիքի բնավորության հակառակ գծերը:

Բանահյուսությունը միահյուսված սինթետիկ արվեստ է. „Таким образом, фольклор, по сути дела, синтетическое искусство, соединяющее в себе особенности нескольких искусств“:¹⁸

«Մասունցի Դավիթ» էպոսի համահավաք բնագրում աստղանիշով տարբերակված են պատումի այն հատկանիշները, որոնք ասացողը ներկայացրել է երգի ձևով:

Երգով են ասվել Խանդութի գովքը, Դավթի հրաժեշտը Սասնա կանանց ու աղջիկներին, Դավթի մի շարք դիմումներն իր հորեղբայր Հովանին, Դավթի՝ Մսրա գորքին արթնացնելու կոչը, անգամ Մսրա Մելիքի գորահավաքի հրամանը.

«Թղթիկ մի գրեմ հարավային,
Թղթիկ մի գրեմ հյուսիսային,
Թղթիկ մի գրեմ արևելյան,
Թղթիկ մի գրեմ արևմտյան,
Իմ բոլո՛ր գորքին ու գորապետին,
Զենքեր վերցնո՛ղ, թող գա՛,
Պատերազմ է» (էջ 217):

Այսօրինակ հատվածները մեր ազգային էպոսը կապում են երաժշտության և երգարվեստի հետ: Էպոսի շատ հատվածներ կապվում են դրամատիկ սեռի հետ, որովհետև դրանք երկխոսություններ են (տրամախոսություն, դիալոգ):

Ահա մի դիպուկ օրինակ արտատեր պառավի և Դավթի երկխոսությունից.

Դավիթ ասաց. -Պառավ, հապա, սար որ էրթամ
Ինչո՞վ զարկեմ վիրու օջիսար:
Ասաց. -Քո հեր նետ ու աղեղ ուներ:
Էդ նետ – աղեղ, ասա, թող տան՝ էնո՞վ գնա:
-Բա՛, - ասաց Դավիթ.
-Իմ հոր նետ - աղեղ ո՞ւմ մոտ է:
-Քո հրողբոր կընկան հարցուր (էջ 183-184):

«Մասունցի Դավիթ» էպոսում չափազանց շատ են համեմատությունները: Մսրա Մելիքի գորքը համեմատվում է ծովի ավազի հետ. այն շատ բազմամարդ է: Դավիթը մտածում է, որ եթե ինքը դառնա քաղցած գայլ, իսկ Մելիքի գորքը՝ մատղաշ գառներ, ապա չի կարողանա նրանց խեղդել, կամ եթե Մելիքի գորքի անհամար վրանները դառնան խոտի դեզեր, դարձյալ չի կարող դրանք վառել, եթե նույնիսկ այդ վրանները

¹⁸ Н. И. Кравцов, С. Г. Лазутин, Русское устное народное творчество, Москва, 1983, с. 7-8 («Այսպիսով, բանահյուսությունը, ըստ էության, սինթետիկ արվեստ է՝ իր մեջ մի քանի արվեստների հատկանիշներ միացնող»):

դառնան մոխիր, և ինքը՝ քամի, նորից անհնար է այդքան մոխիրը տեղից շարժել: Հայկական հերոսական էպոսը ասացողների տարբեր սերունդներ հղկել են, բյուրեղացրել, պատումի ընթացքը դարձրել հստակ, տպավորիչ ու վարակիչ:

Ամեն ազգի էպոս դարերով մշակված և փայփայված մտքի ու զգացմունքների կրողն է:

«Սասունցի Դավիթ» էպոսն ընթերցողին կամ լսողին պատճառում է գեղագիտական հաճույք:

Նշանավոր ֆրանսիացի գրող Ռոմեն Ռոլանը նիդեռլանդական էպոսի՝ «Տիլ Ուլենշպիգելի» մասին ասում է. «Այն ազատության դյուցազնական ձայնն է»¹⁹:

Նույնը պատշաճ է կրկնել «Սասունցի Դավիթ» էպոսի համար, որը ոչ միայն հայ ժողովրդի ազատության դյուցազնական ձայնն է, այլև երբեք չլռող սթափեցման կոչ՝ ուղղված աշխարհի ժողովուրդներին, որոնք իրականում կարող են ապրել խաղաղության ու փոխըմբռնման մթնոլորտում:

¹⁹ Charles De Coster, La Légende et les aventures heroïques, joyeuses et glorieuses d’Ulenspiegel et de Lamme Goedzak, Moscou, 1973, p. 22 (“Il est la vois épique de la Liberté”).

ԱՄՓՈՓՈՒՄ

«Սասունցի Դավիթ» էպոսը եղել և մնում է թե՛ դպրոցական և թե՛ բուհական ծրագրի կարևորագույն թեմա, և նրա ուսուցումը պահանջում է անհրաժեշտ հմտություն:

Էպոսի ուսուցումը ներկայացնում է հայ էպոսագիտության անցած ճանապարհը, որը սկսում է 1874 թվականից՝ Գարեգին Սրվանձտյանցի առաջին գրառումից և հասնում մինչև մեր օրերը:

1939 թվականին նշվել է «Սասունցի Դավիթ» էպոսի ստեղծման հազարամյակը, և այդ առիթով հրատարակվել է համահավաք բնագիրը, որի հիմքում ընկած են եղել Կարապետ Մելիք Օհանջանյանի հրատարակած «Սասնա ծռեր» էպոսի տարբեր պատումների երեք սովորածավալ հատորները: Ինչպես Ֆ. Ֆեյդին է հաստատում, էպոսի համահավաք բնագիրն ամբողջովին ստեղծվել է ժողովրդական պատումների հիման վրա, և նրանում հեղինակային, անհատական հետսմուտ ոչինչ չկա, ողջը հյուսվել է՝ ըստ «ժողովրդական երակի»:

Հայկական հերոսական էպոսն ունի բացառիկ հարուստ գաղափարախոսություն: Այդ գաղափարախոսության ողջ բովանդակությունը մնում է որպես մշտական պահանջ՝ ուղղված ոչ միայն հայ ժողովրդին, այլև համայն մարդկությանը:

«Սասունցի Դավիթ» էպոսի արվեստի ցուցիչն է նրանում գործող հերոսների խիստ անհատականացված և չմոռացվող կերպարների համակարգը:

Հայ ազգային էպոսի յուրացումը պահանջում է բնագրի բարբառային բառերի իմացություն, որոնք այնքան էլ մեծ քանակ չեն կազմում, և դրանց մի մասը դեռ պահպանված է այսօրվա խոսակցական հայերենում:

«Սասունցի Դավիթ» էպոսի ուսուցումը հնարավորություն է տալիս դասի ժամանակ ուշադրության կենտրոնում պահել ողջ դասարանը, անցկացնել աշակերտակենտրոն դասեր: Դասախոսությունը և դասը պարտադիր է վարել հետաքրքիր, աշխույժ. այդ հնարավորությունն ընձեռում է գրական այս հուշարձանի հետաքրքրաշարժ բովանդակությունը:

Լևոն Շանթը, որը նաև հմուտ մանկավարժ էր ու կրթության գործի երկարամյա կազմակերպիչ, կարևորում էր ազգային նշանավոր դեմքերի, պատմական գիտելիքների ուսուցումը հայկական դպրոցներում. «Մեզի շրջապատող և մեզի հետ դարերու ընթացքին շփման մեջ եղող բազմաթիվ հին ու նոր ժողովուրդներու մասին կհիշվի, բազմատեսակ ընդհանուր պատմական երևույթներու և շարժումներու մասին կխոսվի, ինչպես, օրինակ՝ նախարարական ավատական կապերն են կամ խաչակիրներու արշավը, հույն - սասանական մրցակցությունը, քրիստոնեության ու մահմեդականության ծագումը և ուրիշ»¹:

¹ Լ. Շանթ, Երկերի ժողովածու, հ. V, Երևան, 2012, էջ 498:

Լևոն Շանթի այս ցուցումը լիովին կիրառելի է «Սասունցի Դավիթ» էպոսն ուսուցանելիս:

«Սասունցի Դավիթ» էպոսի պատգամների միջոցով հայկական դպրոցներում և բուհերում կդաստիարակվեն ազգային ու համամարդկային ճիշտ գաղափարներով զինված քաղաքացիներ:

ՀԱՎԵԼՎԱԾ

Ինովացիոն դասերի փորձանմուշներ

Հավելվածում տեղադրում ենք ինովացիոն մեթոդներով գրականության դասը կազմակերպելու մի քանի դասատեսակների առաջադրանքներ, որոնք հարմարեցված են «Մասունցի Դավիթ» էպոսի ուսուցմանը:

Գ	ՈԻ	Ս
Գիտեմ	Ուզում եմ սովորել	Մովորեցի
<p>Գիտեմ, որ «Մասունցի Դավիթ» էպոսը ձևավորվել է VIII-X դարերում, երբ Հայաստանն ազատագրական կռիվներ էր վարում արաբական լծի դեմ:</p>	<p>Ուզում եմ իմանալ, թե որ պատմիչներն են գրել հայերի այն ապստամբությունների մասին, որոնք ուղղված էին արաբական լծի դեմ:</p>	<p>Ես սովորեցի, թե որն է «Մասունցի Դավիթ» էպոսի պատմական հիմքը: Հիմա իմ գիտելիքներն առավել հարուստ են: Իմացա, որ էպոսի առաջին՝ «Մանասար և Բաղդասար» ճյուղը ձևավորվել է դեռևս նախաքրիստոնեական ժամանակներում, և այդ մասին վկայում են Աստվածաշնչի Հին կտակարանը, նաև Մովսես Խորենացին ու Թովմա Արծրունին: Արաբական ծանր լծի և նրա դեմ մղված ապստամբությունների վերաբերյալ ուշագրավ փաստեր կան թե՛ Ղևոնդ պատմիչի և թե՛ Թովմա Արծրունու պատմական երկերում: Թովմա Արծրունին իր պատմության գլուխներից մեկն ամբողջովին նվիրել է խութեցիների ապստամբությանը, որի ժամանակ խութեցի Հովնանը մերկազեն սպանում է արաբ ոստիկան Յուսուփին: Արծրունու վերոհիշյալ հատվածում</p>

		<p>հետաքրքիր փաստեր կան խութեցիների վարք ու բարքի մասին: Այդ փաստերը լիովին համապատասխանում են էպոսում նկարագրված սասունցիների բնութագրին: Թովմա Արծրունին պատմում է, թե սասունցիները շատ բարձրախոս են, նրանք զբաղվում են որսով: Սասունը չունի հաց, և ցանում են կորեկ, որից պատրաստված հացը սովի ժամանակ են միայն ուտում: «Սասունցի Դավիթ» էպոսում Դավիթը որսի նպատակով տրորում է արտատեր պառավի կորեկի արտը: Իսկ էպոսի երկրորդ ճյուղը ևս վկայում է, թե Սասունում եղել է հացի սակավություն: Երբ առյուծը փակում է հացի ճանապարհը, Մհերը Քեռի Թորոսից իմանում է, որ Սասունում վար ու ցանքսը քիչ է, և հացը գալիս է Հալեպից:</p> <p>Նույն կերպ հայտնի է դառնում, որ սասունցիները շատ հայրենասեր են և չեն հանդուրժում, որ թշնամին մտնի իրենց երկիր: Արծրունին վկայում է, թե սասունցիները խիստ բարեպաշտ են և միշտ իրենց բերանում ունեն հին սաղմոսները: Ես իմացա, որ Սասնա դյուցազունները մշտապես դիմում են Հիսուսին,</p>
--	--	--

		ապավինում նրա հովանավորությանը և իրենց թեկնունեն Խաչ Պատերազմին:
--	--	--

Քառաբաժանում

1. (աշխատանք բնագրի շուրջ)

Քառաբաժանման մեջ խոսքը «Սասունցի Դավիթ» էպոսի առաջին ճյուղի մասին է

<p>Չայներ</p> <p>1.Լսում եմ օտար հարկահանների ձիերի դոփյունը:</p> <p>2.Ծովի ձայնը, որի ափին իր հայրենի եզերքին հրաժեշտ է տալիս Ծովինարը:</p> <p>3.Ծովինարի՝ տազնապով լի որոշման ձայնը:</p>	<p>Երկու հիմնական արտահայտություն</p> <p>1.Ես մեկ ջան եմ, Էրթամ, կորսըվիմ:</p> <p>2.Մերն ասաց քահանային. -Տերտեր, Իմ տղաներին դաս տուր՝ կարդան:</p>
<p>Հիմնական գաղափարը</p> <p>Հայրենիքի ճակատագիրն ավելի կարևոր է, քան անձնական կյանքը:</p>	<p>Տրամադրություն</p> <p>1.Հիացմունք Ծովինարի արարքի նկատմամբ:</p> <p>2.Թախիծ հայրենի երկրից հեռանալու պատճառով:</p> <p>3.Ուրախություն, որ տղաները փա-</p>


	խուստով փրկում են իրենց կյանքը, խալիֆից ազատում են նաև իրենց մորը:
--	--

Քառարժանում

2. (աշխատանք բնագրի շուրջ)

<p style="text-align: center;">Տեսողական պատկերներ</p> <ol style="list-style-type: none"> 1. Հայոց Գագիկ թագավորի պալատին են մոտենում խալիֆի հարկահանները: <li style="padding-left: 40px;">2. Երիտասարդ ու շատ գեղեցիկ Շովինարը: 3. Հայոց թագավորի պալատի խորհրդակցությունն աղջկա ամուսնության առթիվ: 4. Շովինարը խմում է հանկարծակի բխած աղբյուրի ջուրը: 	<p style="text-align: center;">Զգացում</p> <ol style="list-style-type: none"> 1. Շովինարն իրոք շատ գեղեցիկ է: <li style="padding-left: 40px;">2. Գագիկ թագավորը չի ուզում ամուսնացնել իր գեղանի դստերը կռապաշտ խալիֆի հետ: 3. Հպարտություն Շովինարի անձնագոհ արարքի համար:
<p style="text-align: center;">Զուգորդում</p> <p>(համեմատում այլ ստեղծագործության հետ) «Սասունցի Դավիթ» էպոսի առաջին ճյուղը կարելի է համեմատել Մուրացանի «Ռուզան» դրամայի հետ:</p> <p>Երկու գրական ստեղծագործություններում էլ թե՛ Շովինարը և թե՛ Ռուզանն այլադավան բռնակալի հետ ամուսնանում են հանուն հայրենի երկրի և ժողովրդի փրկության:</p>	<p style="text-align: center;">Նոր վերնագիր</p> <p style="text-align: center;">«Արքայադուստրը իրեն զոհում է հանուն հայրենիքի»</p> <p style="text-align: center;">կամ</p> <p style="text-align: center;">«Հայրենանվեր արքայադուստրը»</p>

Կերպարի վերլուծության գծագիր



Ուսուցչի կազմած հարցերի պատասխանների հերթականությունները պահպանում ենք ըստ գծագրի համարների հերթականության: Վերջում կտեղադրենք «Հակասություն» շրջանակի պատասխանները:

ա) Ի՞նչ է անում հերոսը

«Սասունցի Դավիթ» էպոսի գլխավոր հերոսը՝ Սասունցի Դավիթը, փրկում է Հայաստանն արաբական լծից:

բ) Ի՞նչ է ասում կամ մտածում հերոսը

Սասունցի Դավիթը ողջ էպոսի ընթացքում արտահայտում է բազմաթիվ իմաստուն մտքեր, որոնք այսօր էլ մեծ արժեք ունեն:

Գրի ենք առնում Դավթի իմաստուն մտքերն ու առանձնացնում դրանց մեջ ամենաէականները՝

1. Դավիթը բացատրում է, թե որևէ այլ երկիր իրավունք չունի խառնվելու իր հայրենիքի գործերին. ամեն երկրի գահակալ թող զբաղվի միայն իր երկրի գործերով.

- Դե, գնա, թագավորիդ բարև արա, ասա.
Էն Մհերի տղա Դավիթն էսպես արեց.
Մեկ էլ չը գա՝ Սասնա կընիկ, աղջիկ տանի՛.
Սասնա տուն դեռ չի ավերվե,
Որ դուք էկե մեզեն խարջ ու խարաջ կ'ուզեք:
Մըսրա գավառ իրեն, Սասնա գավառ մեզի:
Թե չէ՝ ինչ իրմեն կը գա, թող չը խնայի (էջ 210):

2. Դավիթն արթնացնում է Մսրա գորքին և միայն դրանից հետո է նետվում մարտի դաշտ:

3. Դավիթն ազատ է արձակում Մսրա Մելիքի գորքին և զգուշացնում, որ մյուս անգամ չգան Սասունի վրա, այլապես կպատժվեն, ինչպես Մսրա Մելիքը:

4. Դավիթը պատժում է իր վրա կռիվ եկած թշնամիներին, նրանց փոխարեն թագավոր է կարգում հասարակ մարդկանց և խոստանում պաշտպանել նրանց վտանգի պահին.

- Քաղքի մեջ ով մնացեր էր,
Էնոնց համար թագավոր դրեց.
Ջոջ մարդեր սպանեց,
Պստիկներ տեղ դրեց, ասաց.
-Քանի դու ժիր եք, կռիվ միք է՛րթա:
Որ դու նեղ կը՛նկնեք,
Ինձի մի թուղթ գրեք, ես կը գամ (էջ 278):

զ) Ինչպե՞ս են ուրիշները վերաբերվում կերպարին

1. Դավթին սիրում են Սասունի հասարակ մարդիկ:
2. Դավթի համար սրտացավ է Ձենով Հովանը:
3. Դավթին ճիշտ ուղղության է մղում արտատեր պառավը:
4. Մսրա Մելիքն ատում է Դավթին և նրա մեջ տեսնում հավերժական թշնամի:
5. Դավթին սիրում էր Չմշկիկ Սուլթանը, սակայն Դավթի ու Խանդութի ամուսնությունից հետո նենգորեն սպանել է տալիս նրան:
6. Դավթին անամոթ առաջարկներ է անում և հետապնդում Ձենով Հովանի կինը՝ Սարին:
7. Դավթին անսահման սիրում էր կինը՝ Խանդութը, որը վերջինիս մահվանից հետո ինքնասպան է լինում:
8. Դավթի մահվան վրեժը հանում է որդին՝ Փոքր Մհերը:

դ) Ինչպե՞ս է կերպարը փոխվում

1. Դավիթը սկզբում շատ միամիտ էր:
2. Դավիթը լիովին փոխվում է, երբ արտատեր պառավը նրան խորհուրդներ է տալիս ու առավել բորբոքում հայրենասիրական կրակը:
3. Խանդութին տեսնելուց հետո Դավիթը դառնում է իր կնոջն անմնացորդ նվիրված ամուսին:

ե) Հեղինակի թեման կամ տեսակետը

Հեղինակը ժողովուրդն է, որ դարերի ընթացքում ավելի հղկել ու պանծացրել է իր սիրելի հերոսի կերպարը: Հազար անգամ իրավացի է ժողովուրդը, որի կարծիքով իդեալական մարդիկ չկան, եթե անգամ դա իրենց սիրելի հերոսն է՝ Սասունցի Դավիթը:

Ժողովուրդը ցավով ներկայացնում է, թե ինչպես շիտակ, ազնիվ, անձնագոհ, նվիրված Դավիթը մի անգամ սխալվում և երդմնազանց է լինում: Նա նշանված էր Չմշկիկ Սուլթանի հետ, սակայն Խանդութին հանդիպելուց հետո մոռանում է Չմշկիկ Սուլթանին տված խոստումը, և նենգ Չմշկիկն իրենց ընդհանուր աղջկա ձեռքով սպանում է Դավթին:

-Իմ ցեղ իմ անձից է,
Էդ իմ սերմն էր, որ ինձի սպանեց:
Դավիթ էդ խոսք ասաց,
Ու ինքն էլ էստեղ մեռավ (էջ 292):

Հակասություն

Դավթի կերպարում չկա հակասություն. նրա բնավորության գծերը և վարքագիծը խիստ ներդաշն են: Չնայած վիպական կերպար է, սակայն բոլորովին գրքային ու վերացական չէ, այլ կենսական է և օժտված բազմաթիվ իրական գծերով:

ԿԱՆԽԱՏԵՍՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

«Սասունցի Դավիթ» Էպոսի համար

<p style="text-align: center;">Ի՞նչ է լինելու հետո</p> <ol style="list-style-type: none">Դավիթը սպանելու է Մսրա Մելիքին:Դավիթն ամուսնանալու է Խանդութ խաթունի հետ:Դավիթը պատժվելու է և սպանվելու սեփական աղջկա ձեռքով:	<p style="text-align: center;">Ինչու՞ են այդպես կարծում</p> <ol style="list-style-type: none">Դավիթին ժողովուրդն օժտել է փոքրիկ թերություններով, որպեսզի նրա կերպարը բնական լինի, որովհետև անթերի մարդ գոյություն չունի:Դավիթը կարող էր չխաբվել Մսրա Մելիքից ու չընկնել փոսը:Դավիթն իր ողջ էությանը հայ ժողովրդի իդձերի մարմնավորումն է:
<p style="text-align: center;">Ի՞նչ եղավ</p> <ol style="list-style-type: none">Ծովինարը ծնեց երկու գերմարդ գավակներ:Սասնա գահակալների սերունդն արդարացրեց ժողովրդի հույսերը, ու երկիրն ազատվեց թշնամուց:Մհերը՝ Դավթի որդին, փակվեց Ագռավաքարում՝ ապագայի արդար աշխարհի սպասելիքով:	<p style="text-align: center;">Հորինի՞ր նոր վերնագիր և նոր ավարտ</p> <ol style="list-style-type: none">«Սասնա խենթերը»Մհերը դուրս է գալիս քարայրից և ոտքի հանում հայերին՝ վերագտնելու իրենց կորցրած տարածքները:Հայ կանայք դառնում են հայրենի զինվորներ ու ապավինում քարայրում փակված Մհերին:

ԿՄԱԽՔ

«Մասունցի Դավիթ» թեմայի ամփոփում

Կմախքի գծապատկերի հարցերը կդնենք հերթականությամբ և անմիջապես կպատասխանենք:

1. Մեկ բառ, որն արտահայտում է բնագրի իմաստը:

«Մասունցի Դավիթ» համար այդ մեկ բառն ազատությունն է: **Ազատություն:**

2. Մեկ արտահայտություն, որը գլխավորն է բնագրի համար:

Չհարձակվեք մեր խաղաղ երկրի վրա, կարժանանաք Մսրա Մելիքի ճակատագրին:

3. Մեկ նախադասություն, որը գլխավորն է բնագրի համար:

Աշխարհը գութանի մոտ կլիանա:

4. Լոգո՝ էական մի բան, սիմվոլ, խորհրդանիշ:

Լոգոն կարելի է դարձնել Երվանդ Քոչարի Մասունցի Դավիթ արձանի պատկերը:

5. Ի՞նչ գույն ունի բնագիրը:

«Մասունցի Դավիթ» էպոսի բնագիրը բազմագույն է՝ նայած էպոսում պատկերված դեպքերի: Այն կարող է լինել սև, կանաչ, կարմիր, վարդագույն:

6. Ի՞նչ մեղեդի ես լսում բնագիրը կարդալիս:

Դավիթի և Մսրա Մելիքի կովի հատվածը կարդալիս լսում եմ Արամ Խաչատրյանի «Սպարտակ» բալետի երաժշտությունը:

7. Ավարտի՛ր միտքը. «Ամենալավը դասի մեջ այն է, որ...»:

Ամենալավը դասի մեջ այն է, որ ժողովուրդը երբեք չի ընկճվել, այլ հավատով սպասել է լավ օրերի:


Ֆրանսիացի դասական գրող Ալեքսանդր Դյուման իր «Կոմս Մոնտե Քրիստո» վեպն ավարտում է հետևյալ եզրահանգումով. «Մարդկային իմաստությունը հետևյալ երկու բառերի մեջ է՝ ՍՊԱՍԵԼ ԵՎ ՀՈՒՍԱԼ»¹:

¹ A. Dumas, Le comte de Monte-Cristo, t. III, Paris, 1979, p. 592 («Toute la sagesse humaine sera dans ces deux mots: Attendre et espérer!»).

Զուգադրության աղյուսակ

ա) Նոր հասկացություն

բ) Ծանոթ հասկացություն



գ) Նմանություններ

դ) Տարբերություններ

Հարաբերությունների կատեգորիաները

Ներկայացնենք «Զուգադրության աղյուսակը» լրացված ձևով:

ա) Նոր հասկացություն

Էպոսի ժանրն ուսումնասիրում ենք ավելի բարձր դասարաններում: Իրականում էպոսն ու առասպելն ունեն մեծ ընդհանրություններ: Երկուսն էլ հնագույն բանահյուսական ժանրեր են: Երկուսի հեղինակներն էլ անհատներ չեն, այլ դրանք կոլեկտիվ ստեղծագործություններ են: Ուսուցիչը հիշեցնում է Մովսես Խորենացու ասածը հունական առասպելների մասին: Հունական առասպելները պերճ են ու ողորկ և իրենց մեջ թաքցնում են իրականությունը:

Գ կետը վերաբերում է էպոսի և առասպելի նմանություններին, որոնք վերևում թվարկեցինք: Ավելացնենք, որ թե՛ առասպելը և թե՛ էպոսը պատմական հիմք ունեն, և նրանցում շատ են չափազանցությունները:

Դ կետը վերաբերում է առասպելի և էպոսի տարբերություններին ու նմանություններին:

Անպայմանորեն առասպելը տարբերվում է էպոսից իր ընդգրկման ժամանակով: Մեր ազգային առասպելներից յուրաքանչյուրն ընդգրկում է պատմական կոնկրետ ժամանակահատված: Էպոսի ժամանակային տարածքն ավելի մեծ է, ինչպես տեսանք, «Շահ Նամեն» և «Սասունցի Դավիթը» ունեն հազարամյակների կտրվածք: Նմանությունն, անշուշտ, նրանց հերոսական, դյուցազնական բնույթի մեջ է: Հիշենք, թե «Տիգրան և Աժդահակ» առասպելում որքան կատարյալ է Տիգրանի կերպարը, որը և՛ արտաքինով, և՛ ներքին հոգեկան կերտվածքով գեղեցիկ է և անթերի: Տիգրանը մտածում է իր ժողովրդի մասին և նրան պահում լիության ու շենության մեջ: Նույնն է նաև Սասունցի Դավիթը, որը նույնպես գեղեցիկ է, և նրա քաջության ու գեղեցկության լուրն այնքան տարածված էր, որ Խանդութը գուսաններ է ուղարկում, որոնք գովաբանում են Խանդութի գեղեցկությունը և հետաքրքրություն արթնացնում արդեն Չմշկիկ Սուլթանի հետ նշանված Դավթի մեջ: Նմանությունների ու տարբերությունների շարքը կարելի է շարունակել:

ե) Հարաբերությունների կատեգորիաները:

Նմանությունների ու տարբերությունների համեմատական բնութագրին հետևում են հարաբերությունների կատեգորիաները՝

ա) Ինչպե՞ս էր Սասունցի Դավիթը վերաբերվում իր թշնամիներին, հարազատներին ու ազգակիցներին:

բ) Ինչպե՞ս էր Տիգրան Երվանդյանը վերաբերվում իր հայրենակիցներին, հարազատներին և թշնամիներին:

«Մասունցի Դավիթ» էպոսի համահավաք բնագիրը մեծ հնարավորություն է տալիս աշակերտներին, նաև էպոսն ուսումնասիրող ուսանողներին զանազան թեստային առաջադրանքներ տալու:

Ներկայացնում ենք դրանցից մի քանիսը:

1. Աշխարհագրական անուններ «Մասունցի Դավիթ» էպոսից

Ներկայացնում ենք հարցերը և պատասխանները:

1. Որտե՞ղ է գտնվում Մհերի դուռը: - 2 միավոր:

Պատասխան. Մհերի դուռը գտնվում է Վան քաղաքի մոտ՝ ժայռերի բարձրության վրա: Դուռը քանդակելու ժամանակը ցարդ անհայտ է:

2. Ի՞նչ քաղաք է Էրզրումը կամ Արզրումը: Բերել հայկական անունը: - 2 միավոր:

Պատասխան. Էրզրումը Արևմտահայաստանի Կարին քաղաքն է, որը թուրքերը կոչել են Էրզրում: Ալեքսանդր Պուշկինը եղել է այդ քաղաքում՝ Արևելահայաստանը 1828 թվականին Ռուսաստանին միանալուց հետո: Տե՛ս նրա «Ճանապարհորդություն դեպի Էրզրում» գործը:

3. Ո՞ր երկրի քաղաքն է Հալեպը: - 2 միավոր:

Պատասխան. Հալեպը ներկայիս Սիրիայի երկրորդ կարևորություն ունեցող քաղաքն է, որը լի է պատմական հուշարձաններով:

4. Ո՞ր երկրի մայրաքաղաքն է Բաղդադը: - 2 միավոր:

Պատասխան. Բաղդադը Արաբական խալիֆոսության մայրաքաղաքն էր, այժմ՝ Իրաքի:

5. Ո՞ր առասպելում է հիշվում Նեմրուժ լեռը: - 2 միավոր:

Պատասխան. Նեմրուժ լեռը հիշատակվում է Գարեգին Սրվանձոյանցի գրառած «Հայկի և Բելի» առասպել-գրույցում, ըստ որի Հայկը Բելին հաղթելուց հետո Նեմրուժ լեռան գագաթին թոնիր է փորում և Բելի դիակն այրում: Աստծու հրամանով կրակը ջուր է դառնում, և Բելի մոխիրն անցնում է ջրի տակ: Բելի ուղտերն ու ուղտապանները, այդ ամենը տեսնելով, վախից քարանում են:

2. Գրել երեք հատվածներ «Մասունցի Դավիթ» էպոսից և Հովհ. Թումանյանի համանուն պոեմից, որոնք գրեթե նույնն են: Առաջին երկու հատվածների համար երեքական, իսկ երրորդի համար չորս միավոր:

1. «Մասունցի Դավիթ» համահավաք բնագիր

Նորեն ընկավ սար - ձոր ու ման էկավ.
Ի՛նչ կադար ջանավար որ կար՝ ամեն ժողովեց,
Ասլանը մե՛կ կողմից բերեց,
Պնգրլը մե՛կ կողմից բերեց,
Գելերը մե՛կ կողմից բերեց-
Ամե՛ն գազաններ ժողովեց, դաշտ լի՛ք արավ:

Հովհ. Թումանյան - «Մասունցի Դավիթ»

Դավիթն էր. ընկավ նրանց ետևից,
Որին մի սարից, որին մի ձորից,
Գել, ինձ, առյուծ, արջ ու վագրը բռնեց,
Հավաքեց, բերավ, իր նախրին խառնեց
Ու առաջն արավ դեպ Սասնա քաղաք:

2. «Մասունցի Դավիթ» համահավաք բնագիր

Ինձ պետք են հազա՛ր – հազար անբեղ, սևմորուս զինվոր.
Ինձ պետք են հազա՛ր – հազար էն մոր մինուճա՛ր զինվոր.
Ինձ պետք են հազա՛ր – հազար թխամազ մորուսով զինվոր.
Ինձ պետք են հազա՛ր – հազար սպիտակ մորուսով զինվոր.
Ինձ պետք են հազա՛ր – հազար կարմիր մորուսով զինվոր.
Ինձ պետք են հազա՛ր – հազար սպիտակ ձիավոր,
 Ա՛խ, սպիտա՛կ ձիավոր.
Ինձ պետք են հազա՛ր – հազար կարմիր ձիավոր,
 Ա՛խ, կարմիր ձիավոր.
Ինձ պետք են հազա՛ր – հազար սև-սև ձիավոր.
 Ա՛խ, սև-սև՛ ձիավոր,
Ինձ պետք են հազա՛ր – հազար փող փչողներ,
 Թմբուկ զարկողներ,
 Ա՛խ, թմբու՛կ զարկողներ...

Հովհ. Թումանյան - «Մասունցի Դավիթ»

Կատաղեց, փրփրեց Մըսրա թագավոր.
-Կանչեցե՛ք, ասավ, իմ գորքը բոլոր.
Հագար հագար մարդ նորելուկ մանուկ,
Հագար հագար մարդ անբեղ, անմորուք,
Հագար հագար մարդ բեղը նոր ծըլած,
Հագար հագար մարդ նոր թախտից ելած,
Հագար հագար մարդ թուխ միրուքավոր,
Հագար հագար մարդ սպիտակ ալևոր,
Հագար հագար մարդ, որ փողեր հընչեն,
Հագար հագար մարդ, որ թըմբուկ զարկեն...
Կանչեցե՛ք թող գան, հագնեն զենք, զըրա՛հ,
Կըռիվ տի գընամ ես Դավթի վըրա,
Մասունն ավերեմ,
Հեղեղեմ, բերեմ:

3. «Մասունցի Դավիթ» համահավաք բնագիր

Կանչեց, զարկեց Թուր Կեծակին:
Կըտրեց քառսուն ջաղացի քար,
Կըտրեց քառսուն գոմշու կաշին,
Կըտրեց հրեշ Մըսրա Մելքին,
Կըտրեց ճակտից, ոտքերուց դուրս էլավ
Ու յոթ գազ էլ մտավ գետին,
Գնաց հասավ սև ջուր:

Հովհ. Թումանյան - «Մասունցի Դավիթ»

Ասավ, էլավ ու փոթորկվեց,
Թըռավ, ցոլաց Դավթի հուր ձին,
Ձին փոթորկվեց, փայլատակեց
Ու ցած իջավ Թուր – Կեծակին:
Անցավ քառսուն գոմշի կաշին,
Անցավ քառսուն քարերը ցած,
Միջից կըտրեց ժանտ հըրեշին,
Օխտը գազ էլ դենը գընաց:

Այսօրինակ զուգահեռներ շատ կարելի է գտնել համահավաք բնագրի և Հովհ. Թումանյանի մշակման մեջ: Այսպիսի առաջադրանքները կնպաստեն և՛ հավաքական բնագրի, և՛ թումանյանական պոեմի բովանդակությունների յուրացմանը:

3. Ընտրել ճիշտ պատասխանը

1. Ո՞վ է Մեծ Միերի կինը: 2 միավոր

ա) Դեղձուն Ծամ

բ) Գոհար

գ) Սարիե

դ) Արմաղան

Պատասխան. Արմաղան:

2. Ո՞ր վանքն է վերաշինում Սասունցի Դավիթը: 2 միավոր

ա) Վարագա

բ) Սուրբ Կարապետ

գ) Մարութա Սուրբ Աստվածածին

դ) Աղթամարի

Պատասխան. Մարութա Սուրբ Աստվածածին:

3. Ինչո՞վ է զբաղվում պատանի Դավիթը Սասունում: 2 միավոր

ա) ձկնորսությամբ

բ) փայտահատությամբ

գ) գառնարածությամբ

դ) նախրորդությամբ

Պատասխան. գառնարածությամբ, նախրորդությամբ:

4. Ինչո՞վ է Խանդութը սիրո առաջարկ անում Դավթին: 2 միավոր

ա) գնդակով

բ) խնձորով

գ) կաղինով

դ) ընկույզով

Պատասխան. խնձորով:

5. Ի՞նչ կար նորածին Փոքր Միերի փակ ձեռքում: 2 միավոր

ա) արյուն

բ) կոճակ

գ) թել

դ) թուղթ

Պատասխան. արյուն:

Օգտագործված գրականություն

ա) Հայերեն

1. Աբեղյան Մ., Երկեր, Ը, Երևան, 1985:
2. Առաքել Սյունեցի, Յաղագս քերականութեան համառատ լուծմունք, Լոս Անջելես, 1982:
3. Աստվածաշունչ, Բեյրութ, 1985:
4. «Ասք Իգորի արշավանքի մասին», Սուրեն Վահունու թարգմանությամբ, Դերենիկ Դեմիրճյանի խմբագրությամբ և ներածական հոդվածով, Երևան, 1985:
5. Դոլուխանյան Ա., Ֆրեդերիկ Ֆեյդին հայագետ, Երևան, 2008:
6. Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Աղանդների հերքումը, Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա.Ա.Աբրահամյանի, Երևան, 1970:
7. Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Ներածությունը, թարգմանությունը և ծանոթագրությունները Վրեժ Վարդանյանի, Երևան, 1978:
8. Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ. IV, Երևան, 1991:
9. Կոնստանդին Երզնկացի, Լոյսն առաւօտուն, Երևան, 1981:
10. Հայ ժողովրդի պատմություն, հ. II, Երևան, 1984:
11. Հովերոս, Իլիական, Հան ի հայ հ. Արսէն Կոմիտաս Բագրատունի ի Մխիթարեանց, Վենետիկ, 1864:
12. Հովհաննես Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, Աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Գ. Բ. Թոսունյանի, Երևան, 1996:
13. Հովհաննես Երզնկացի, Հաւաքումն մեկնութեան քերականի, Լոս Անջելես, 1983:
14. Ղևոնդ, Պատմություն, Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Արամ Տեր - Ղևոնդյանի, Երևան, 1982:
15. Մկրտիչ Նաղաշ, Աշխատասիրությամբ Էդ. Խոնդկարյանի, Երևան, 1965:
16. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Աշխարհաբար թարգմանությունը և մեկնաբանությունները Ստ. Մալխասյանի, Երևան, 1981:
17. Նոր կտակարան, Ս.Էջմիածին, 1975:
18. Շանթ Լ., Երկերի ժողովածու, հ. V, Երևան, 2012:
19. Ջրբաշյան Էդ., Մախչանյան Հ., Գրականագիտական բառարան, Ընդհանուր խմբագրությամբ պրոֆ. Էդ. Ջրբաշյանի, Երևան, 1972:

20. «Մասնա ծոեր», Ժողովրդական վեպ, Աշխատությամբ Ս. Հարությունյանի, Երևան, 1977:
21. «Մասունցի Դավիթ», Հայկական ժողովրդական էպոս, Երևան, 1961:
22. Սրվանձտյանց Գ., Երկեր, հ. I, Երևան, 1978:
23. «Վասիլ Դիգենիս Ակրիստաս», Թարգմանություն, ուսումնասիրություն, ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1978:
24. «Քրիստոնյա Հայաստան», Հանրագիտարան, Երևան, 2002:
25. Օրմանյան արք. Մաղաքիա, Ծիսական բառարան, Երևան, 1992:

բ) ռուսերեն, ֆրանսերեն, անգլերեն

1. Аникин В. П., Русская народная сказка, Пособие для учителя, Москва, 1977.
2. Далгат У. Б., Литература и фольклор, Москва, 1981.
3. „Калевала“, Вступительная статья Мариэтты Шагинян, Перевод Л.Бельского, Москва, 1977.
4. Кравцов Н.И., Лазутин С. Г., Русское устное народное творчество, Москва, 1983.
5. „Миф, фольклор, литература“, Ленинград, 1978.
6. „Проблемы современного сравнительного литературоведения“, Под редакцией Н.А. Вишневской и А.Д. Михайлова, Москва, 2004.
7. Сакулин П. Н., Наука о литературе, её итоги и перспективы, Москва, 2012.
8. Словарь русского языка, т. IV, С-Я, Москва, 1988.
9. „Слово о полку Игореве“, Москва, 1987.
10. „Хрестоматия по теории литературы“, Пособие для студентов, Москва, 1982.
11. Charles De Coster, La Légende et les aventures héroïques, joyeuses et glorieuses d'Ulenspiegel et de Lamme Goedzak, Moscou, 1979.
12. Dumas Alexandre, Le comte de Monte-Cristo, t.III, Paris, 1979.
13. Labouret D., Meunier A, Les Méthodes du français au lycée, Paris, 1996.
14. The Reader's Companion to world literature, second edition, London, 2002.

Բովանդակություն

1. Նախաբան ----- 3

- ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
2. Հայ էպոսագիտության մի քանի դրվագներ ----- 5

- ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
3. «Մասունցի Դավիթ» էպոսի գաղափարներն ու կերպարների համակարգը -----
----- 15

- ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
4. Էպոսի ժանրը, պատմական հիմքը, արվեստը ----- 44

5. Ամփոփում ----- 58

- ՀԱՎԵԼՎԱԾ
6. Ինովացիոն դասերի փորձանմուշներ ----- 62

7. Օգտագործված գրականություն ----- 84